


ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋՈՅԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ  
YOUTH EVENTS HOLDING CENTER

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ  
YOUTH STUDIES INSTITUTE




# ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ՆԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆ

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԿԱՅԻՍ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԿԱՅԱՅՄԱՆ ՆԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

## RESEARCH ON YOUTH WORK AND YOUTH WORKER

CURRENT STATE OF YOUTH WORK AND PERSPECTIVES  
OF ITS DEVELOPMENT



ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ ՆԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆ

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԿԱՅԻՍ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ՆՈՒԱՆԿԱՐՆԵՐԸ

**Հետազոտական թիմի անդամներ**

**Վերլուծաբաններ՝**

Արման Մելքոնյան

Լիլիթ Ավդալյան

**Գաշտային աշխատանքների համակարգող՝**

Հերմինե Կարապետյան

**Խմբագրողներ՝**

Հռիփսիմե Բաղդասարյան

**Անգլերենի թարգմանիչներ՝**

Անուշ Նալդրանյան

Հռիփսիմե Բաղդասարյան

Քնարիկ Գալավարյան

Աշխեն Դավթյան

**Հետազոտության համակարգող՝**

Մարինա Գալստյան

## Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի մասին

Երիտասարդական Ուսումնասիրությունների Ինստիտուտը (այսուհետ՝ ԵՈՒԻ-ն) հիմնադրվել է 2013թ. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի աջակցությամբ: Ինստիտուտի առաքելությունն է նպաստել փաստարկված երիտասարդական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացին երիտասարդների մասնակցությամբ:

| 3 |

Ինստիտուտի գործունեության ուղղություններն են՝ երիտասարդական ուսումնասիրությունների իրականացումը, հետազոտությունների հիման վրա երիտասարդների համար արդիական խնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունների մշակումը, ինչպես նաև երիտասարդության ոլորտի տարբեր խմբերի հետ ցանցի ձևավորումը, ակադեմիական գիտելիքի տարածումը:

Ինստիտուտը իրականացրել է մի շարք հետազոտություններ, այդ թվում՝

- ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները,
- Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում,
- Գործատու-երիտասարդ-ուսումնական հաստատություն համագործակցության ինստիտուցիոնալիզացման հեռանկարները:

## Շնորհակալության խոսք

Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը շնորհակալություն է հայտնում ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի կողմից իրականացվող հեղուկացրած գործունեությանը մշտապես աջակցելու համար:

Շնորհակալություն ենք հայտնում հեղուկացրած երիտասարդության ոլորտի բոլոր շահագրգիռ կողմերին՝ քաղաքականություն մշակողներին, առանցքային տեղեկատվություններին, երիտասարդական կազմակերպություններին, ում պարրաստական և բաց շփումը հնարավորություն ընձեռեց սրանալ ոլորտի համապարփակ պատկերը: Ուրախ ենք տեսնել, որ Երիտասարդական աշխատանքը մեր երկրում ուղղակիորեն զնում է դեպի զարգացում և հանդիսանում է երկրում առողջ կենսական և աշխատանքային մթնոլորտի ձևավորման հեռանկարային գրավական է դառնում:

Ինչպես նաև ցանկանում ենք շնորհակալություն հայտնել հեղուկացրած աշխատանքներում ներգրավված բոլոր մարդկանց, ովքեր այս կամ այն կերպ նպաստել են հեղուկացրած գաղափարի առաջադրմանը, մեթոդաբանության մշակմանը, դաշտային աշխատանքի իրականացմանը, արդյունքների հավաքագրմանը, տվյալների մշակմանը, արդյունքների վավերացման գործընթացներին:

Առանձնահատուկ շնորհակալություն ենք հայտնում հեղուկացրած աշխատանքներին աջակցած հերկյալ կառույցներին՝

1. «Պետական Գործիչների Երիտասարդական Դպրոց» ՀԿ
2. «Հույսի կամուրջ» ՀԿ
3. Արարատ երիտասարդաց միություն
4. «Առաջընթաց» երիտասարդական ՀԿ
5. Աշտարակի քաղաքացիական երիտասարդական կենտրոն
6. Ապարանի Օրիուս բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոն
7. Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Արտաշատի կենտրոն
8. Մասիսի համայնքապետարան
9. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ
10. Շիրակի թեմի սոցիալ-կրթական կենտրոն
11. Արթիկի համայնքապետարան
12. «Գորիսի Կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ
13. Կապանի համայնքապետարան
14. «Հիմք» բարեգործական բնապահպանական ՀԿ
15. Քուչակի համայնքապետարան
16. Վերին Արտաշատի համայնքապետարան
17. Սառնաղբյուրի «Համայնքային և երիտասարդական նախաձեռնությունների ակումբ» ՀԿ
18. Փանիկի համայնքապետարան
19. Քարահունջի աշակերտական խորհուրդ
20. Արծվանիկի համայնքապետարան

# Բովանդակություն

Ներածություն .....	8
Հետազոտության մեթոդաբանություն .....	11
<b>ՄԱՍ I. Երիտասարդական աշխատանքի ներկայիս վիճակը և գործառնությունը .....</b>	<b>13</b>
Երիտասարդական աշխատանքի որոշ միջազգային դիրքորոշումներ .....	13
Երիտասարդական աշխատանքի սահմանումը ոլորտի ներկայացուցիչների կողմից Հայաստանում .....	16
Երիտասարդական աշխատանքի նպատակներն՝ ըստ ոլորտի մասնագետների կարծիքի .....	21
Երիտասարդական աշխատանքի գործունեության հիմնական ուղղությունները և սուբյեկտները .....	24
Երիտասարդական աշխատանքի իրականացման մեխանիզմները ՀՀ-ում .....	31
Ոլորտում տարվող երիտասարդական աշխատանքների քիբախային խումբը .....	33
<b>ՄԱՍ II. Երիտասարդ աշխատողի ներկայիս կարգավիճակն ու գործունեությունը .....</b>	<b>35</b>
Երիտասարդական աշխատողի կերպարի տարրերը .....	35
Երիտասարդական աշխատողի անձնական և մասնագիտական որակները .....	38
Երիտասարդական աշխատողի կարգավիճակը .....	39
Երիտասարդական աշխատողի գործառնությունը .....	41
<b>ՄԱՍ III. Երիտասարդական աշխատանքի կայացման նախադրյալները և հեռանկարները ՀՀ-ում .....</b>	<b>45</b>
Երիտասարդական աշխատանքի զարգացման իրավական հիմքերը Հայաստանում .....	45
Երիտասարդական աշխատանքի իրականացման ներկայիս ֆինանսական հիմքը .....	46
Երիտասարդական աշխատողի նկատմամբ մասնագիտական և էթիկական պահանջները, ինչպես նաև դրանց գնահատման գործիքները .....	48
Երիտասարդական աշխատանքի ինստիտուտի կայացման մարտահրավերները .....	51
<b>ՄԱՍ IV. Երիտասարդական աշխատողի՝ ՀՀ սահմանման կոնցեպտուալ վերլուծություն .....</b>	<b>55</b>
Վարկածներ երիտասարդական աշխատանքի ոլորտում հետագա հետազոտությունների համար .....	64
Երիտասարդական աշխատանքի ինստիտուցիոնալիզացման որոշ քայլերի առաջարկներ .....	64
Հավելված 1 .....	66
Հավելված 2 .....	67

**Research on Youth Work and Youth Worker**

**Current State of Youth Work and Perspectives of its Development..... 69**

Introduction..... 71

Methodological Side of the Work ..... 72

**Part 1. Current State and Functioning of Youth Work ..... 73**

    Def inition of Youth Work by Representatives of the Youth Sphere in Armenia..... 73

    Objectives of Youth Work According to the Specialists of the Sphere ..... 74

    Main Directions of Youth Work Activities and Subjects of Youth Work..... 75

    Mechanisms of Implementation of Youth Work in Armenia ..... 77

    Target Group of the Youth Work Performed in the Sphere ..... 78

**Part 2. Current Status and Activities of the Youth Worker..... 79**

    The components of a Youth Worker image..... 79

    Personal and Professional Qualities of the Youth Worker ..... 79

    Status of the Youth Worker ..... 81

    Functions of the Youth Worker ..... 81

**Part 3. Prerequisites and Prospects of the Development of Youth Work  
in the Republic of Armenia ..... 83**

    Legal Basis for the Development of Youth Work in Armenia..... 83

    Current Financial Basis for the Implementation of Youth Work ..... 84

    Professional and Ethical Requirements for the Youth Worker and their  
    Assessment Tools ..... 85

    Challenges of the Development of Youth Work ..... 87

    Conclusions and Recommendations ..... 90



# Ներածություն

| 8 |

Ամբողջ աշխարհում երիտասարդությունը գնահատվում է որպես զարգացման գրավական՝ հզոր իր գիտելիքով և հնարավորություններով: Միջազգային դիսկուրսում շրջանառվող հիմնական գաղափարն այն է, որ հանուն համընդհանուր բարօրության՝ երիտասարդ մարդիկ պետք է ապահովված լինեն կրթությամբ և արդյունավետ տնտեսական համակարգի ապահովման համար անհրաժեշտ հմտություններով: Որոշ երկրներ պայքարում են իրենց երիտասարդության կրթության ու զբաղվածության հարցի լուծման ուղղությամբ՝ միաժամանակ ակնկալելով երիտասարդության թվաքանակի աճ իրենց պետությունում. դա պահանջում է կրկնակի ջանքեր<sup>1</sup>: Երիտասարդության ուղղությամբ ներդրումների պահանջը մեծանում է տարբեր երկրներում: Շարունակաբար ավելի ու ավելի շատ երկրներ են համակարծիք դառնում այն հարցում, որ երիտասարդների ներուժի դրսևորման ու զարգացման քաղաքականությունն ի վերջո նպաստում է երկրի տնտեսության զարգացմանը: Պետական շահերից է բխում, որ այսօր արդեն երիտասարդությունը մասնակցի քաղաքականության մշակման, պլանավորման, իրականացման գործընթացներին, և սա պահանջում է նվիրում, կամք ու հանձնառում երկու կողմերից էլ<sup>2</sup>:

Վերջին տասնամյակներում տարբեր երիտասարդական միավորումներ նշում են իրենց 75 կամ 80-ամյակները, ինչը ցույց է տալիս երիտասարդական աշխատանքի կայացմանն ու շարունակականությանն ուղղված միջազգային մոտեցումը: Դեռևս 1990-ականներին Եվրոպական Միության երկրներում իրականացվում էին երիտասարդական աշխատողների և առաջնորդների վերապատրաստումներ՝ այդպիսով ապահովելով երկրների կառավարման համակարգերը հետագա կադրերով<sup>3</sup>:

Ինչպես Խորհրդային Միության կազմում ընդգրկված շատ երկրների պարագայում, Հայաստանի դեպքում էլ բացակայում է երիտասարդական

<sup>1</sup> Youth Population Trends And Sustainable Development  
<sup>2</sup> The power of 1.8 Billion. Adolescents, youth and the transformation of the future  
<sup>3</sup> The History Of Youth Work In Europe Relevance For Youth Policy Today

աշխատանքի և պետության կողմից երիտասարդների հետ տարվող ինստիտուցիոնալիզացված աշխատանքի պատմությունը: Իրականում երիտասարդական աշխատանքի պատմությունը որպես այդպիսին սկսվում է 1990-ականներին, երբ Հայաստանը արդեն դեմոկրատական ինքնակառավարվող և ինքնուրույն որոշումներ ընդունող երկիր էր<sup>4</sup>:

\* \* \* \* \*

2014թ. հաստատվեց Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը, որտեղ որպես երիտասարդական քաղաքականության սուբյեկտ սահմանվեց «երիտասարդական աշխատողը»: Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը հայեցակարգի նախագծի վերաբերյալ հանրային քննարկումների ընթացքում դուրս բերեց այն հիմնական կետերը, որոնք հավելյալ ուսումնասիրման կարիք ունեն: Երիտասարդական աշխատանքից և երիտասարդական աշխատողից ակնկալիքները, գործունեության հիմնական շրջանակի վերաբերյալ մտեցումները, երիտասարդական աշխատանքի բնույթը այդ կետերից էին: Ինչպես նաև նախատեսվում է մշակել Երիտասարդական աշխատանքի կանոնակարգ, ինչի համար միջազգային փորձի ուսումնասիրմանը զուգահեռ անհրաժեշտություն կա հասկանալու հայաստանյան իրականության մեջ առկա նախադրյալները, որոնք կարող են նպաստել ինստիտուտի կայացմանը:

Այս ամենը հաշվի առնելով՝ Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ 2015թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին իրականացրել է «Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական աշխատողի վերաբերյալ հետազոտությունը»:

Հետազոտությունը ներկայացնում է երիտասարդական աշխատանքի ինստիտուտի առկա վիճակը և զարգացման հեռանկարները՝ ըստ երիտասարդության ոլորտի ներկայացուցիչների ընկալումների և գնահատականների: Արդյունքների վերլուծությունն անդրադառնում է այնպիսի խնդիրներին, ինչպիսին են՝ երիտասարդական աշխատանք և աշխատող հասկացությունների սահմանումները, երիտասարդական ոլորտի տար-

<sup>4</sup> A History Of Youth Work In Armenia

բեր ներկայացուցիչների ակնկալիքները երիտասարդական աշխատանքից, ներկայացվում է, թե որ կառույցները ինչպես են իրականացնում երիտասարդական աշխատանքը այսօր Հայաստանում: Վերլուծությունը նաև ներկայացնում է, թե ինչպիսի հիմքեր կան ներկայումս երիտասարդական աշխատանքը Հայաստանում ինստիտուցիոնալացնելու համար:

| 10 |

Կարծում ենք՝ հետազոտությունը կարող է լավ հիմք հանդիսանալ հետագա ավելի ուղղորդված ուսումնասիրությունների և որոշումների ընդունման համար:

# Նեոազդոսության մեթոդաբանություն

Հայաստանում<sup>5</sup> երիտասարդական աշխատանքի **առկա վիճակն ու ինստիտուտի կայացման նախադրյալները** ուսումնասիրելու նպատակով հետազոտությունը կենտրոնացել է հետևյալ խնդիրների վրա՝

- Երիտասարդական աշխատանքի ներկայիս վիճակը և գործառնությունը Հայաստանում,
- Երիտասարդ աշխատողի ներկայիս կարգավիճակն ու գործունեությունը,
- Երիտասարդական աշխատանքի կայացման նախադրյալները և հեռանկարները ՀՀ-ում:

Հետազոտական խնդիրներին ուղղված կիրառվել են տեղեկատվության ստացման հետևյալ **մեթոդները՝**

## **Փաստաթղթերի ուսումնասիրություն**

Ուսումնասիրվել են Հայաստանում երիտասարդական ոլորտի նախորդ հետազոտությունները և իրավական փաստաթղթերը:

## **Որակական հարցազրույցներ**

Իրականացվել են որակական անհատական հարցազրույցներ 20 առանցքային տեղեկատուների հետ, ովքեր միննույն ժամանակ հանդիսանում էին երիտասարդական կազմակերպությունների ղեկավարներ կամ կազմակերպության ներկայացուցիչներ, 10 փորձագետների հետ, ովքեր երիտասարդական ոլորտում ակտիվորեն գործող մասնագետներ են և մասնակցում են երիտասարդական քաղաքականության մշակմանը տարբեր փուլերում:

<sup>5</sup> Խոսքը Հայաստանի երրորդ հանրապետությունում զարգացած երիտասարդական աշխատանքի մասին է:

## **Ֆոկուս-խմբային քննարկումներ**

Իրականացվել է 23 ֆոկուս-խմբային քննարկում երիտասարդների հետ:

Որպես ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցներ և առանցքային տեղեկատուներ հանդես են եկել՝

| 12 |

1. Երիտասարդական կազմակերպությունների տնօրեններ/նախագահներ,
2. Երիտասարդական կազմակերպությունների փոխտնօրեններ/փոխնախագահներ,
3. Տարբեր ծրագրերի համակարգողներ/ղեկավարներ,
4. Ծրագրային աշխատողներ,
5. Երիտասարդական կազմակերպությունների անդամներ:

Որպես երիտասարդական կազմակերպություններ՝ հետազոտության շրջանակում հանդես են եկել երիտասարդական ՀԿ-ներ, քաղաքական կուսակցությունների երիտասարդական թևեր, առաքելական եկեղեցուն կից երիտասարդական կառույցներ, ուսանողական խորհուրդներ, ուսանողական գիտական ընկերություններ:

Ռեսուրսային սահմանափակության պատճառով հետազոտությունն իրականացվել է Երևանում, Արագածոտնի, Արարատի, Շիրակի և Սյունիքի մարզերում: Մարզի ընտրությունը իրականացվել է ըստ մայրաքաղաքից հեռավորության չափանիշի: Մարզերում բնակավայրի ընտրությունը հիմնավորվել է բնակավայրում իրականացված երիտասարդական ծրագրի առկայությամբ:

Վերլուծության արդյունքների վերաճշտման, ինչպես նաև Ինստիտուտի ու երիտասարդական կազմակերպությունների միջև համագործակցության հաստատման նպատակով իրականացվել են վերլուծական արդյունքների ճշգրտումներ փորձագետների հետ, հանդիպումներ ՀԿ ներկայացուցիչների հետ:

# ՄԱՍ I. Երիտասարդական աշխատանքի ներկայիս վիճակը և գործառնությունը

## Երիտասարդական աշխատանքի որոշ միջազգային դիրքորոշումներ

Գրականության ուսումնասիրությունն ու քեյս-սթադիների վերլուծությունները թույլ են տալիս առանձնացնել այն բաղկացուցիչները, որոնք նպաստում են հաջողված երիտասարդական աշխատանքի իրականացմանը: Լավ երիտասարդական աշխատանքը հաճախ հանդես է գալիս որպես վարվելաձևերի, վերաբերմունքի և մեթոդների համադրություն: Այսպիսով, ըստ **Եվրոպական հանձնաժողովի մոտեցման՝**

Երիտասարդական աշխատանքի լավ որակն ապահովում են երիտասարդական աշխատողի և երիտասարդի սերտ կապերը, օգնության ու աջակցության կարիք ունեցող երիտասարդների հանդեպ ուշադրությունը, ուսուցման հնարավորությունները, նպատակի սահմանումը և ձեռքբերումների ճանաչումը, ապահով և աջակցող միջավայրի նպաստումը՝ երիտասարդին մոտիվացնելու ապրել կյանքը, թույլ տալ սխալներ, մասնակցել ու նախաձեռնել իրենց հասակակիցների հետ հաճելի և ուրախ առիթների, սեփական զարգացմանը միտված երիտասարդների ինքնավարություն, այլ դերակատարների հետ համագործակցությունը (ինչպես, օրինակ, ֆորմալ կրթությունն է կամ սոցիալական աշխատանքը)<sup>6</sup>:

Այդպիսով, երիտասարդական աշխատանքի իրագործման համար Եվրոպական հանձնաժողովը ենթադրում է հետևյալ արդյունքները՝

<sup>6</sup> Working With Young People: The Value Of Youth Work In The European Union, p. 7

- Կրթություն և վերապատրաստում,
- Զբաղվածություն և ձեռնարկատիրություն,
- Առողջություն և բարեկեցություն,
- Մասնակցություն,
- Կամավորություն,
- Սոցիալական ներառում,
- Երիտասարդություն և աշխարհը,
- Մշակույթ<sup>7</sup>:

Երիտասարդական աշխատանքի զարգացման մեծ մարտահրավեր է այն, որ Եվրոպական Միության ոչ մի երկիր չունի տվյալներ երիտասարդական աշխատանքի ձեռքբերումների վերաբերյալ երիտասարդական աշխատանքի միջոցառումներին երիտասարդների մասնակցության տեսանկյունից: Շատ երկրներ բացարձակ տվյալներ չունեն այս հարցի վերաբերյալ, իսկ որոնք ունեն, նկարագրում են երիտասարդական աշխատանքի մի հատվածը միայն: Տվյալները հաճախ հիմնված են լինում՝

- Երիտասարդական կազմակերպություններում անդամագրության վրա, սակայն անդամագրությամբ աշխատող կազմակերպությունները ներկայացնում են երիտասարդական աշխատանքի սեկտորի մի մասը միայն,
- Կոնկրետ ծրագրերի շրջանակներում ֆինանսավորված միջոցառումներին մասնակցած երիտասարդների թվի վրա, ինչը ունի երիտասարդների կրկնակի թվի ներկայացման վտանգ,
- Առկա տեղեկատվությունն էլ սահմանափակ է այնքանով, որ չկա երիտասարդների թվի բաշխվածություն ըստ ավելի մանրամասն կատեգորիաների, ինչը թույլ չի տալիս պատասխանել հարցերի, թե ով է ընդգրկվել և ով մնացել դուրս<sup>8</sup>:

Միացյալ թագավորության կողմից որդեգրված դեմոկրատական և ազատագրական երիտասարդական աշխատանքի մոտեցումը հիմնված է հետևյալ անկյունաքարերի վրա՝


<sup>7</sup> Working With Young People: The Value Of Youth Work In The European Union, p. 9

<sup>8</sup> Working With Young People: The Value Of Youth Work In The European Union, p. 10

- Կամավորական հարաբերություններ երիտասարդ մարդկանց և երիտասարդական աշխատողների միջև,
- Քննադատողական երկխոսության հանձնառություն,
- Ընդդիմադիր գործունեության վրա կենտրոնացում,
- Երիտասարդ մարդկանց «այստեղ ու հիմա»-ի վրա կենտրոնացում, ինչպես նաև նրանց ապագայի,
- իշխանության հավասարակշռությունը թեքելով երիտասարդ մարդկանց կողմը<sup>9</sup>:

Իռլանդական կառավարության Երեխաների և երիտասարդության հարցերի բաժնի կողմից ֆինանսավորված «Երիտասարդական աշխատանք, հետազոտական գրականության համակարգված քարտեզագրում» հետազոտությունը<sup>10</sup>, որում անդրադարձ է կատարվել մինչ այդ երիտասարդական աշխատանքի ոլորտում իրականացված 93 հետազոտությունների, ցույց է տալիս, որ աշխարհում անընդհատ մեծանում է երիտասարդական աշխատանքի հետազոտական գրականության թիվը, մասնավորապես 2001-2005թթ.-ին արդեն կտրուկ աճ է նկատվում, այդ ընթացքում ընդհանուր թվով 47 հետազոտական աշխատանք է հրատարակվել, և այդ ցուցանիշը աճում է՝

**Գծապատկեր 1. Երիտասարդական աշխատանքի հրատարակված հետազոտական աշխատանքները**



<sup>9</sup> Innovation In Youth Work: Thinking In Practice, p. 23

<sup>10</sup> Youth Work: A Systematic Map Of The Research Literature, p. 16



Աշխատանքում ուսումնասիրված 93 հետազոտություններից 71-ում որպես երիտասարդական աշխատանքի միջոցառումների իրականացման նպատակ է ներկայացվել անձնային և սոցիալական զարգացումը, 28-ում՝ սոցիալական փոփոխությունը, 24-ում՝ կրթությունը և կարիերան, 26-ում՝ անվտանգությունն ու բարեկեցությունը, 20-ում՝ ներդրումը հասարակությունում<sup>11</sup>:

## Երիտասարդական աշխատանքի սահմանումը ոլորտի ներկայացուցիչների կողմից Նայասանում

Հայաստանում անկախության տարիներից իվեր սկսել են գործել բազմաթիվ պետական և ոչ պետական կազմակերպություններ, որոնց հիմնական թիրախային խումբը երիտասարդներն են, կամ գործունեության հիմնական ուղղությունն առնչվում է երիտասարդության խնդիրներին, այնուամենայնիվ, Հայաստանում պետական կառույցները և հասարակական կազմակերպություններն ունեն տարբեր մոտեցումներ և ընկալումներ երիտասարդական աշխատանքի գործունեության շրջանակի վերաբերյալ:

Այս հետազոտության շրջանակում առաջադրված խնդիրներից մեկն էր բացահայտել, թե ինչպես են ընկալում երիտասարդական աշխատանքը երիտասարդության ոլորտի տարբեր շահագրգիռ կողմերը: Թեև միջազգային պրակտիկայում գործում են երիտասարդական աշխատանքի բազմաթիվ սահմանումներ, դրանց թարգմանությունը և կիրառումը ՀՀ-ում, առանց հաշվի առնելու փորձագետների և դաշտում գործող դերակատարների կարծիքը, թերի կլիներ: Հետազոտության բոլոր մասնակիցներին խնդրել ենք սահմանել երիտասարդական աշխատանք հասկացությունը իրենց բառերով:

Ըստ **կիրառական հազեցվածության**՝ հետազոտության մասնակիցների սահմանումները կարելի է տարբերակել հետևյալ կերպ, մասնավորապես մարզային ակտիվ երիտասարդական ՀԿ-ներից մեկի նախագահը, առավել հստակ է սահմանում երիտասարդական աշխատանքը.

<sup>11</sup> Youth Work: A Systematic Map Of The Research Literature, p. 25

### Մեջբերում 1. Առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից

«Երիտասարդական աշխատանքը երիտասարդների հետ պարբերական աշխատանք է, որը պետք է ուղղված լինի երիտասարդի անհատական, մասնագիտական զարգացվածությանը և երիտասարդի՝ առհասարակ որպես քաղաքացի և անհատ հասարակության մեջ տեղ ունենալուն»:

| 17 |

Հետազոտության ընթացքում նշված սահմանումները որակապես տարբերվում են նաև կախված հարցվողների՝ երիտասարդական աշխատանքում ունեցած **մասնակցության աստիճանից** և գործունեության տեսակից: Ըստ երիտասարդական կազմակերպության **գործունեության տեսակի՝** որոշակի նմանություններ ունեն ուսանողական խորհուրդների և քաղաքական կուսակցություններին կից երիտասարդական կառույցների ներկայացուցիչների կողմից հնչեցված սահմանումները.

### Մեջբերում 2. Առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից

«Երիտասարդական աշխատանքը երիտասարդների որոշակի խմբի կողմից որևէ գաղափարի կամ նպատակի իրականացման համար տարվող գործունեությունն է»:

Առաքելական եկեղեցուն և կրոնական կազմակերպություններին կից երիտասարդական խմբերի անդամները մատնանշում են հոգևոր, մշակութային և հայրենասիրական կրթության անհրաժեշտությունը և երիտասարդական աշխատանքի գործառույթները տեսնում են այդ համատեքստում: Խոցելի խմբերի հետ աշխատող երիտասարդական կազմակերպության ներկայացուցիչները կարևորում են հատկապես քաղաքացիական դաստիարակության, սեփական իրավունքների մասին տեղեկացվածության և շահերի պաշտպանության գործառույթները:

Որոշ դեպքերում սահմանման մեջ մատնանշվում է նաև այն կազմակերպության տեսակը, որը զբաղվում է երիտասարդական աշխատանքով.

### Մեջբերում 3. Փորձագիտական հարցազրույցից

«...ՀԿ-ներում աշխատող երիտասարդները, ինչպես նաև ՀԿ-ների հետ համագործակցությունը եվրոպական այլ երկրների հետ, թույլ է տվել հասարակական դաշտում ակտիվ գործունեություն ծավալող

երիտասարդներին համարել իրենց աշխատանքը երիտասարդական... ՀԿ-ներ, որոնք այսօր այդ ոլորտում գործունեություն են ծավալում, մարտիկ են, ովքեր զբաղվում են երիտասարդական խնդիրներով և ապահովում են երիտասարդական մասնակցությունը քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին»:

Թեպետ տարբեր մասնակիցների ձևակերպումներում երիտասարդական աշխատանքը նկարագրվում է տարբեր կողմերից և ոչ միշտ ամբողջական, այնուամենայնիվ, հետազոտության ընթացքում հնչած սահմանումների բազմազանության մեջ հնարավոր է նկատել մեկ հիմնական ընդհանրություն, որն առկա է գրեթե բոլոր սահմանումներում. Երիտասարդական աշխատանքը բաղկացած է «ներքին» և «արտաքին» ցուցիչներից.

- «Ներքին» ցուցիչները արտացոլում են երիտասարդների ինքնակատարելագործմանն ուղղված գործառույթները,
- «Արտաքին» ցուցիչները ուղղված են երիտասարդական մասնակցությանը քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին և երիտասարդական հիմնախնդիրների լուծմանը:

Սահմանման ներառած բոլոր կատեգորիաները հաշվի առնելու և այս հասկացությունը չավելի դարձնելու համար անհրաժեշտ է նախ հստակեցնել սահմանման մեջ կիրառվող հասկացությունների կատեգորիալ շրջանակը, որը ներկայացված է ստորև.

**Աղյուսակ 1. Երիտասարդական աշխատանքի սահմանման մեջ կիրառվող հասկացությունների կատեգորիազիս**

Ֆիմնական ցուցիչներ	Ներքին ցուցիչներ	Արտաքին ցուցիչներ
Երիտասարդ	Ինքնակատարելագործում	Երիտասարդների հիմնախնդիրներ
Երիտասարդական խումբ	Ինքնադրսևորում	Կամավորություն
Երիտասարդական ՀԿ	Ինքնաճանաչում	Քաղաքացիական մասնակցություն
	Անձնական աճ	Սոցիալ-տնտեսական կյանք
	Սոցիալական աճ	Քաղաքական կյանք
	Կրթական, մասնագիտական աճ	Հասարակություն

Համաձայն ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգի (ՀՀ կառավարության 2014թ. դեկտեմբերի 25-ինիստի N 54 արձանագրային որոշում)<sup>12</sup> Երիտասարդական աշխատանքը, ներառված լինելով Երիտասարդական աշխատող հասկացության սահմանման մեջ, հետևյալ կերպ է սահմանվում.

«Երիտասարդական աշխատանքը երիտասարդների, երիտասարդական խմբերի հետ տարվող աշխատանք է կամ աշխատանք, որն ուղղված է երիտասարդության հիմնախնդիրների լուծմանը»<sup>12</sup>:

Ինչպես տեսնում ենք, այս սահմանումն արտացոլում է երիտասարդական աշխատանքի հիմնական առանձնահատկությունը, սակայն ամբողջությամբ չի անդրադառնում գծապատկեր 1-ում նշված բաղադրիչներին:

Ընդհանրացնելով՝ կարող ենք ձևակերպել հետևյալ սահմանումը.

Երիտասարդական աշխատանքը գործունեության ձև է, որի նպատակն է ներգրավել երիտասարդներին երիտասարդական ՀԿ-ների, խմբերի և երիտասարդության խնդիրներով զբաղվող այլ կազմակերպությունների և սուբյեկտների կողմից իրականացվող երիտասարդության հիմնախնդիրների, նրանց կարիքների լուծմանն ուղղված աշխատանքներում՝ նպաստելով վերջիններիս անձնային, կրթական, մասնագիտական աճին և հասարակության սոցիալ-տնտեսական, մշակութային, կրոնական կամ քաղաքական կյանքում երիտասարդների մասնակցությանը:

Նման սահմանումը արտահայտում է տվյալ ոլորտում առկա միջազգային արժեքները, երիտասարդության սեզմենտի գոյության, առողջ գործունեության և հասարակական գործընթացներին ներգրավումը:

Հետազոտության մասնակիցները համակարծիք են այն հարցում, որ երիտասարդական աշխատանքը գործունեություն է, որ առաջին հերթին միտված է երիտասարդների անձնային աճին: Ընդ որում, փորձագետները նշում են, որ երիտասարդական աշխատանքի ավանդույթը Հայաստանում սկսել է ձևավորվել դեռևս Խորհրդային Միության տարիներին,

<sup>12</sup> Քաղվածք Գայաստանի Գանրապետության Կառավարության Նիստի արձանագրությունից Գայաստանի Գանրապետության երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին

ասկայն այդ աշխատանքն իրենից ներկայացնում է քաղաքականացված մտածելակերպի փոխանցում ու վերարտադրություն, որը տարվում էր երիտասարդների հետ թե՛ դպրոցում, թե՛ ընտանիքում: Չնայած այսօրվա երիտասարդական աշխատանքն իր բնույթով շատ տարբերվում է խորհրդային տարիներին եղածից, երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչները և նաև որոշ փորձագետներ մտավախություն ունեն, որ երիտասարդական աշխատանքի խիստ սահմանումը և ինստիտուտի ստեղծումը Հայաստանում կարող է անխուսափելիորեն հանգեցնել երիտասարդական ոլորտի քաղաքականացմանը, այլ կերպ ասած՝ երիտասարդական աշխատանքն իր բնույթով կարող է դառնալ ուղղորդված քաղաքական և սահմանափակ՝ իր նպատակների ընտրության և ծրագրերի իրագործման մեջ:

#### Մեջբերում 4. Փորձագիտական հարցազրույցից

«...այսօր ամեն ինչ զալիս է մեր հասարակական ոլորտի բավականին քառասային վիճակից, մեր հասարակական ոլորտը կարիք ունի պետական աջակցություն ստանալու, ոչ թե կուսակցական ոլորտից աջակցություն ստանալու, այլ ռեալ չեզոք պետական աջակցություն: Այսօր կան կառույցներ, ովքեր ունեն փորձառություն և կարող են ինչ-որ ոլորտներում արդեն աջակցել պետությանը, որովհետև հասարակական ոլորտը, նույն ասենք պետության դեմ չի ուղղված, նույն ասենք պետության կարիքները իրար հետ միասին զարգացնեն պետությունը, և խնդիրը նրանում է, որ այսօր մեր ընդհանուր հասարակական ոլորտը կախված է դրսից, դոմորներից...»:

Ըստ փորձագետների՝ երիտասարդական աշխատանքը սկսվում է այնտեղ, որտեղ որ երիտասարդներն են կյանքի, աշխարհի հանդեպ ունեցած իրենց տեսլականով և սեփական հետաքրքրություններով, բայց երիտասարդական աշխատանքն առաջարկում է նաև նոր փորձառություն և մարտահրավերներ՝ դրանով իսկ նպաստելով երիտասարդների կարողությունների և ոգևորության աճին:

# Երիտասարդական աշխատանքի նպասակներն՝ ըստ ոլորտի մասնագետների կարծիքի

Հաճախ հետազոտության մասնակիցները չեն կարողանում սահմանել երիտասարդական աշխատանքը, սակայն ներկայացնում էին երևույթը որպես շրջանակներում իրականացվող գործողությունների տեսանկյունից, հետևաբար այս հաշվետվության մեջ երիտասարդական աշխատանքը հաճախ կներկայացվի երիտասարդական աշխատողի գործողությունների համատեքստում:

| 21 |

Երիտասարդական աշխատանքի նպատակները սահմանելուց առաջ անհրաժեշտ է նախ տարանջատել որպես շրջանակներում երիտասարդական աշխատողի անձնական և մասնագիտական, ու երիտասարդական կազմակերպության կամ խմբի նկատմամբ առաջադրվող նպատակները: Մտորել ներկայացված են այն նպատակները, որոնք, ըստ հետազոտության մասնակիցների, իր առջև պետք է դնի երիտասարդական կազմակերպությունը կամ խումբը, որը զբաղվում է երիտասարդական աշխատանքով:

## Աղյուսակ 2. Երիտասարդական կազմակերպության կամ խմբի նպատակները՝ ըստ հետազոտության մասնակիցների կարծիքի

### Երիտասարդական կազմակերպության կամ խմբի նպատակներ՝

- Բարձրացնել երիտասարդների սոցիալական և քաղաքական **իրազեկվածության** մակարդակը,
- Չնարավորություն տալ նրանց իրականացնել մտահղացումները,
- Օգնել երիտասարդներին **ընդունել** գիտակցված **որոշումներ** սեփական կյանքի, արժեքային համակարգի և հասարակության զարգացման հետ կապված: Սովորեցնել պատասխանատվություն կրել սեփական որոշումների համար,
- Խրախուսել երիտասարդներին ակտիվորեն և քննադատաբար **մասնակցել** իրենց համայնքում և հասարակության մեջ առկա գործընթացներին,
- **Զարգացնել** երիտասարդների անձնային որակները և միջանձնային հաղորդակցման հմտությունները,
- Օգնել երիտասարդներին **լինել** ավելի ինքնավստահ, հաստատական և անկախ:

Վերոնշյալ նպատակները դասավորված են ըստ երիտասարդական աշխատանք իրականացնող կազմակերպությունների կողմից դրանց կիրառման աստիճանի և կարևորության աստիճանի, որոնք նշել են հետազոտության մասնակիցները: Ըստ փորձագետների՝ թեպետ երիտասարդական աշխատանքի հիմնական նպատակը պետք է լինի երիտասարդների մասնակցության, տեղեկացվածության, անձնական և մասնագիտական աճը, կարևոր է նաև Հայաստանում երիտասարդական աշխատանքի խնդիրների շարքում ներառել երիտասարդներին առարկայական, շոշափելի աջակցությանն ուղղված գործողությունները, ինչպիսին են, օրինակ, «աջակցել որպեսզի երիտասարդները իրենց ունակություններին համապատասխան աշխատանք գտնեն», կամ «հոգալ երիտասարդների հիմնարար կարիքները՝ կեցության և սննդի ապահովումը»:

Ֆոկուս-խմբային քննարկումներին մասնակցած երիտասարդական աշխատողների կողմից հնչած նպատակները չնայած որ հիմնականում համընկնում էին վերոհիշյալ նպատակների հետ, սակայն իրենց մեջ առավել նյութական, շոշափելի և զգայական տարրեր են պարունակում.

### Աղյուսակ 3. Երիտասարդական աշխատանքի նպատակները՝ ուղղված երիտասարդներին՝ ըստ երիտասարդական աշխատողների

#### Երիտասարդական աշխատանքի նպատակները ուղղված երիտասարդների անձնային աճին՝ ըստ երիտասարդական աշխատողների.

- Նպաստել, որպեսզի երիտասարդները ծեռք բերեն մոր ընկերներ և սոցիալական կապիտալ,
- Աջակցել երիտասարդներին՝ մասնագիտությանը համապատասխան աշխատանք գտնել,
- Կազմակերպել անվճար կիրառական և նպատակային դասընթացներ (օրինակ, աշխատանքի տեղավորվելու նպատակով),
- Ձարգացնել երիտասարդների անձնական և միջանձնային հմտությունները,
- Օգնել երիտասարդներին լինել ավելի ինքնավստահ, հաստատական և անկախ:

Այսպիսով, կարող ենք առանձնացնել երիտասարդական աշխատանքի հետևյալ նպատակները՝ հիմնված հետազոտության մասնակիցների կարծիքների վրա.

1. Ստեղծել հնարավորություններ երիտասարդների հմտությունների ձևավորման և զարգացման համար,
2. Ստեղծել արդյունավետ միջավայր երիտասարդների ինքնադրսևորման, ինքնաճանաչման/ինքնաիրացման և հասարակության մեջ ինտեգրման համար,
3. Ապահովել երիտասարդների կայուն ներգրավվածությունը և մասնակցությունը իրենց խնդիրների, այլ երիտասարդների խնդիրների, ինչպես նաև հասարակության մեջ առկա այլ կարևոր խնդիրների հաղթահարման գործում,
4. Ոչ ֆորմալ կրթության ճանապարհով և տվյալ կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերում հնարավորություն տալ երիտասարդներին ակտիվորեն մասնակցելու ծրագրերի մշակման, դեկավարման և իրականացման փուլերին: Երիտասարդներին որոշում կայացնելու հնարավորություն ընձեռել, որպեսզի վերջիններս սովորեն պատասխանատվություն կրել իրենց որոշումների համար,
5. Ստեղծել նպաստավոր կրթական միջավայր (ֆորմալ և ոչ ֆորմալ), որի շրջանակներում երիտասարդները կսովորեն, թե ինչպես պետք է իրականացնել երիտասարդական աշխատանքներ և փոխանցել այդ գիտելիքները և հմտությունները երիտասարդական աշխատանքում անմիջական մասնակցություն չունեցող երիտասարդներին,
6. Բարձրացնել երիտասարդների սեփական գործունեության արդյունավետությունը՝ շնորհիվ նրանց մոտ սեփական ընտրությունն ի կատար ածելու ունակության զարգացման,
7. Սովորեցնել երիտասարդներին, թե ինչպես պետք է ընդլայնել իրենց գիտելիքները և իրենց կյանքում հանդիպած խնդիրները հասկանալու ունակությունները,
8. Սովորեցնել՝ ինչպես կիրառել ծառայությունները և տեղեկատվությունը իրենց կյանքի վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելու համար:



## Երիտասարդական աշխատանքի գործունեության հիմնական ուղղությունները և սուբյեկտները


| 24 |

Անդրադառնալով երիտասարդական աշխատանքի գործունեության ուղղություններին՝ հարկ է նշել, որ գործունեության բնույթը, կախված երիտասարդական կազմակերպության տեսակից, տարբերվում է: Հետազոտության շրջանակներում, ըստ կազմակերպման ձևի, իրականացվել է երիտասարդական կառույցների տիպաբանություն: Առանձնացվել են հետևյալ խմբերը՝

1. Երիտասարդական ՀԿ-ներ, հիմնադրամներ, Իրավաբանական անձանց միություններ,
2. Պետական կառույցներին կից գործող երիտասարդական հովանոց կազմակերպություններ,
3. Քաղաքական կուսակցություններին կից գործող երիտասարդական կառույցներ,
4. Կրթական հաստատություններին կից գործող կառույցներ, միավորումներ,
5. Երիտասարդական ակումբներ, խմբեր և միավորումներ,
6. Առաքելական եկեղեցուն և կրոնական կազմակերպություններին կից գործող կառույցներ,
7. Միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրեր,
8. Մասնավոր ընկերությունների կողմից ֆինանսավորվող ծրագրեր:

Մյուսնատիկորեն երիտասարդական աշխատանքի ինստիտուտը կարելի է պատկերել հետևյալ կերպ՝

Գծապատկեր 2. Երիտասարդական աշխատանքի համատեքստում գործող կառույցները և հիմնական դերակատարները



Անդրադառնանք խմբերին առանձին-առանձին: ՀՀ պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգում նշվում է, որ **երիտասարդական հասարակական կազմակերպությունը**<sup>13</sup> Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական այն կազմակերպություններն են, որոնք, համաձայն իրենց կանոնադրության, զբաղվում են երիտասարդության հարցերով և/կամ իրականացնում են երիտասարդական աշխատանք<sup>13</sup>:

Ինչպես վկայում են հետազոտության արդյունքները, երիտասարդական աշխատանքով զբաղվող երիտասարդական ՀԿ-ներին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

1. Շատ քիչ են այն երիտասարդական ՀԿ-ները, որոնք զբաղվում են միայն երիտասարդական աշխատանքով. հաճախ ֆինանսավորման աղբյուրներից կամ առանձին ծրագրային առանձնահատկություններից կախված՝ երիտասարդական ՀԿ-ներն իրականացնում են այլ հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործողություններ,
2. Երիտասարդական ՀԿ-ների կողմից իրականացվող երիտասարդական աշխատանքները, որպես կանոն, կարճատև բնույթ են կրում, հետևաբար դժվարությամբ են ապահովում երիտասարդների կայուն ներգրավվածությունը:

Հայաստանյան իրականության մեջ երիտասարդական աշխատանքի՝ որպես մասնագիտության ընկալումը դժվարանում է՝ պայմանավորված գործող երիտասարդական ՀԿ ոլորտային բազմազանության հանգամանքով: Ընդ որում, ըստ գործունեության առաջնային ոլորտի՝ երիտասարդական ՀԿ-ները (տվյալ դեպքում այն կազմակերպությունները, որոնց գործունեության առաջնային ոլորտը երիտասարդության հիմնահարցերն են) հարցվածների համախմբության մեջ կազմում են 19%, որոնց ըստ քանակի՝ հաջորդում են իրավապաշտպան կազմակերպությունները՝ 15.2%, այնուհետև կրթական կազմակերպությունները՝ 9.6%, ապա՝ մնացածը:<sup>14</sup>

<sup>13</sup> ԳԳ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, էջ 3

<sup>14</sup> Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում, ԵՈՒԻ, էջ 21

#### Աղյուսակ 4. Երիտասարդական ՀԿ գործունեության առաջնային ոլորտը

	Պատասխան	Քանակ	Տոկոս (%)
1	Երիտասարդության հիմնահարցեր	69	19.0
2	Մարդու իրավունքներ	55	15.2
3	Կրթություն և գիտություն	35	9.6
4	Համայնքային զարգացում	32	8.8
5	Հաշմանդամություն ունեցող մարդկանց հիմնահարցեր	27	7.4
6	Մշակույթ	24	6.6
7	Առողջապահություն	21	5.8
8	Կանանց հիմնահարցեր	18	5.0
9	Բնապահպանություն	11	3.0
10	Մասնագիտական զարգացում և զբաղվածություն	10	2.8
11	Սպորտ	7	1.9
12	Այլ	30	8.3
13	Առաջնային ոլորտ չեն նշել	24	6.6
	<b>ԸՆդամենը</b>	<b>363</b>	<b>100</b>

Ինչպես տեսնում ենք, կազմակերպությունների 19%-ի մոտ է առաջնային ոլորտ համարվում երիտասարդական հիմնահարցերը, սակայն այս փաստը երկակի է ընկալվում դաշտում գործող երիտասարդական աշխատողների կողմից.

1. Առաջին խումբը գտնում է, որ այնքան էլ էական չէ, թե տվյալ դեպքում ինչ գործունեություն է ծավալում երիտասարդական կազմակերպությունը: Առավել կարևոր է, որ կազմակերպության գործունեությունն ուղղված լինի տվյալ պահին, տվյալ համայնքում առկա առավել կարևոր հիմնախնդիրների լուծմանը, և երկրորդը՝ եթե տվյալ գործունեությունը մաքսիմալ ներգրավում է երիտասարդներին ծրագրերի մշակման և իրականացման փուլում, ապա այդ աշխատանքը կարող է համարվել երիտասարդական աշխատանք:
2. Երկրորդ խումբը գտնում է, որ երիտասարդական աշխատանքը պետք է նախ և առաջ ուղղված լինի երիտասարդների հիմնախնդիրներին. մնացած բոլոր ուղղությունները պետք է երկրորդական տեղ զբաղեցնեն:

**Պեղական կառույցներին կից գործող երիտասարդական կազմակերպություններ** գործում են կամ կոնկրետ պետական կառույցների կազմում, կամ հովանու ներքո/կից, ինչպես, օրինակ, երիտասարդական խորհրդարանը: Մարզպետարաններին կից գործում են նաև երիտասարդական վարչություններ, երիտասարդական խորհուրդներ: Մակայն ինչպես վկայում են հետազոտության արդյունքները, այս կառույցների՝ երիտասարդական աշխատանքի ոլորտում գործունեության արդյունավետությունը շատ ցածր է: Հատկապես երբ խոսքը գնում է մարզային կառույցների՝ երիտասարդական խորհուրդների կամ վարչության մասին:

Մարզային կառույցների գործունեությունը մարզային երիտասարդական աշխատողների կողմից քիչ հավանության է արժանանում, քանի որ ըստ նրանց՝ մարզային կառույցները անմիջականորեն չեն աշխատում երիտասարդների և նրանց խնդիրների հետ: Այս տեսանկյունից հատկապես մարզերում կարևորվում է քաղաքներին և գյուղերին կից գործող երիտասարդական խորհուրդներ ստեղծելու անհրաժեշտությունը:

Միաժամանակ փորձագետները նշել են, որ այսօր Հայաստանում չկա որևէ կառույց, որը միավորում է երիտասարդական ՀԿ-ները և երիտասարդական խնդիրներն ինչ-որ ձևով ավելի լսելի է դարձնում: Հիմնականում դա պայմանավորված է նաև դաշտում համագործակցության պակասով:

Փորձագետները նշում են նաև դաշտի քաղաքականացման գործոնը.

#### **Մեջբերում 5. Փորձագիտական հարցազրույցից**

«Եթե նայենք քաղաքապետարաններին կից երիտասարդական խորհուրդներին, կտեսնեք, որ հիմնականում այն ՀԿ-ների նախագահներն են, որոնք ունեն կուսակցական առնչություններ»:

#### **Քաղաքական կուսակցություններին կից գործող երիտասարդական կառույցները, երիտասարդական քեները**

Քաղաքական կուսակցությունները ապահովում են երիտասարդների քաղաքական և քաղաքացիական մասնակցությունը: Մասնավորապես, երիտասարդական քեների հիմնական գործառնություններն են.

- Երիտասարդների շրջանում կուսակցության գաղափարների, ծրագրերի քարոզչություն,

- Երիտասարդների ներգրավում կուսակցության կազմում ընտրողների բազան համալրելու համար,
- Ընտրարշավներին երիտասարդների ակտիվ մասնակցության ապահովում,
- Կուսակցության կադրային ռեզերվի նախապատրաստում,
- Ժողովրդավարական հասարակության կայացման գործում երիտասարդների ակտիվ մասնակցության ապահովում,
- Հայրենասիրական գաղափարների քարոզում երիտասարդների շրջանում,
- Առողջ ապրելակերպի, կրթության և աշխատանքի քարոզում և համապատասխան պայմանների ստեղծում:

Հատկանշական է, որ չնայած իրենց գործունեության նպատակներով քաղաքական կուսակցությունները և ուսխորհուրդները տարբեր են, սակայն իրենց գործառնական առանձնահատկություններով շատ նման են: Երկուսն էլ իրենց բնույթով խիստ հիերարխիկ համակարգ են, որտեղ որոշումները սահմանվում և կայացվում են վերևից: Ինչպես նշում են երիտասարդական աշխատողները, նմանատիպ գործելաճը շատ քիչ է նպաստում, իսկ որոշ դեպքերում խոչընդոտում է կրթական հաստատություններում և քաղաքական կուսակցություններում երիտասարդական աշխատանքի արդյունավետ իրականացմանը:

Կրթական հաստատություններում գործող ուսանողական խորհուրդները, ուսանողական գիտական ընկերությունները և այլ միավորումներ, երիտասարդների բավական մեծ ներգրավվածություն ունենալով հանդերձ, երիտասարդական աշխատանքի իրականացման տեսանկյունից չեն իրականացնում իրենց ողջ պոտենցիալը: Մասնավորապես, ներկայումս ուսանողները միայն մասնակցում են կրթական գործընթացների կազմակերպմանը կամ ներքին վարչարարական խնդիրների լուծմանը, մինչդեռ, ինչպես նշում են հետազոտության մասնակիցները, կարող են`

- Իրականացնել երիտասարդների հիմնախնդիրների լուծմանն ուղղված սեմինարներ և մրցանակաբաշխություններ,
- Տարածել ժամանակակից քաղաքացիական հասարակության արժեքները,

- Նպաստել երիտասարդների մոտ առաջնորդության հմտությունների ձևավորմանը և այլն:

Երիտասարդական խմբերը որպես կանոն չունեն իրավական կարգավիճակ, ձևավորվում են սպոնտան՝ որևէ գաղափար կամ ծրագիր իրականացնելու նպատակով: Այս խմբերի ուշադրության կենտրոնում որպես կանոն երիտասարդների շահերի պաշտպանությունն է կամ պայքարը անարդարության դրսևորումների դեմ:

Բավական ակտիվ գործունեություն են ծավալում առաքելական եկեղեցուն կից գործող երիտասարդական կառույցները, որոնց հիմնական գործառույթներն են.

- Քրիստոնեական արժեքների քարոզումը,
- Ազգային և մշակութային արժեքների քարոզումը,
- Աջակցությունը խոցելի խմբերին և որոշակի սոցիալական խնդիրներ ունեցող երիտասարդներին,
- Հայոց պատմության, հայոց լեզվի դասավանդում և քարոզում:

Առաքելական եկեղեցուն կից երիտասարդական թեմերի ներկայացուցիչները Գյումրիում և Երևանում փաստում են, որ վերջին տարիներին առավել նկատելի է դառնում իրենց գործունեության արդյունքը, քանի որ այն երիտասարդները, ում հետ իրենք աշխատում են, սկսում են կարևորել ազգային արժեքները, եկեղեցական և ազգային տոները, առավել կատարելագործել են միջանձնային շփման հմտությունները:

Գծապատկեր 2-ում ներկայացված են ոլորտում գործող կառույցները երիտասարդական աշխատանքի համատեքստում, ինչպես նաև այդ կառույցների և դերակատարների միջև առկա կապերի կառուցվածքը և բնույթը:

Ըստ հետազոտության մասնակիցների՝ ներկայումս գործող կառույցների արդյունավետ համագործակցության դեպքում երիտասարդական աշխատողների համար պատասխանատու առանձին կառույց ներդնելու անհրաժեշտություն չի լինի: Իսկ եթե, այնուամենայնիվ, նման անհրաժեշտություն առաջանա, նոր կառույցը պետք է կապող օղակ հանդիսանա մի կողմից դաշտում արդեն գործող երիտասարդական աշխատանքով զբաղվող կազմակերպությունների, մյուս կողմից՝ քաղաքականություն մշակողների և ֆինանսավորող կառույցների միջև:

Ըստ փորձագետների՝ երիտասարդական կազմակերպությունները գործունեության բավականին մեծ ընդգրկում ունեն, սակայն պետական ֆինանսավորման բացակայության, դոնոր կազմակերպությունների կարճաժամկետ և նախապես որոշված նպատակով կիրառվող ֆինանսավորման պայմաններում իրացվում է դրա մի հատվածը, և ազդեցությունը կարճաժամկետ է: Ոլորտի բոլոր ներկայացուցիչները միաձայն նշում են, որ կարիք կա երիտասարդական աշխատանքի գործունեության համակարգման և ընդհանրացման, որպեսզի երիտասարդական աշխատանքները ՀՀ-ում իրականացվեն պլանավորված, թափանցիկ և ծառայեն նույն նպատակին:


## Երիտասարդական աշխատանքի իրականացման մեխանիզմները ՎՎ-ում

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ երիտասարդական աշխատանքները ՀՀ-ում իրականացվում են հիմնականում դասընթացների, սեմինարների, հանդիպումների, քննարկումների, խորհրդատվության, համաժողովների և գիտաժողովների կազմակերպման տեսքով, ինչը հաստատվում է նաև Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրման հետազոտության<sup>15</sup> արդյունքներում, երբ խոսքը գնում է երիտասարդական ՀԿ-ների իրականացրած հիմնական գործողությունների մասին:

<sup>15</sup> Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում, ԵՈՒԻ 2015, էջ 22



Գծապատկեր 3. Երիտասարդական ՀԿ-ների իրականացրած հիմնական գործողությունները



Համաձայն հետազոտության արդյունքների՝ երիտասարդական աշխատանքի գործունեությունը ծավալվում է հետևյալ ձևաչափերով՝

- **Կարճաժամկետ և երկարաժամկետ ղասընթացներ՝** ուղղված երիտասարդների անձնական և մասնագիտական զիտելիքների և հմտությունների զարգացմանը,
- **Հանդիպումների, միջոցառումների կազմակերպում,**
- **Տեղեկատվական գործունեություն՝** տեղեկատվական թերթիկների տարածում, տեղեկատվության և նյութերի տարածում համացանցում և ՉԼՄ-ներով,
- **Խորհրդատվական գործունեություն,** որը ենթադրում է աջակցություն երիտասարդներին իրենց խնդիրների լուծման ճանապարհին:

Փորձագետները նշում են, որ երիտասարդական ոլորտում առկա է տեղեկատվության տարածման խնդիր, ինչը հաճախ սահմանափակում է իրենց աշխատանքի կատարումը: «Կան ՀԿ-ների facebook-յան էջերը, ինֆորմացիան տարածվում է մի քանի տեղերում: Համակարգելու կարիք կա, նաև գրվելու միշտ չկը այդ ինֆորմացիան հասցնելու տեղ», - փորձագիտական

*հարցազրույցից մեջբերում:* Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի՝ ՀԿ-ների հետ աշխատանքային հանդիպումների ժամանակ բազմիցս հնչել է կարծիք, որ, մասնավորապես, ՀԿ գործունեության դաշտում առկա է անտեղյակություն միմյանցից, ինչի արդյունքում տարբեր ՀԿ-ներ կարող են միաժամանակ նմանատիպ ծրագրեր իրականացնել, այնինչ ըստ փորձագետների՝ համագործակցության հնարավորությունը կարող էր ավելի ձեռնառու լինել: Ըստ ՀԿ ներկայացուցիչների՝ արդյունավետ կլիներ ունենալ աշխատանքների տեսանելիություն ապահովող միջոց, ինչը թույլ կտար ՀԿ-ներին իրենց աշխատանքը ավելի պլանավորված իրականացնել և համագործակցություն հաստատել միմյանց, պետական կառույցների հետ: Որպես նման միջոց՝ ՀԿ-ների կողմից առաջարկվեց, օրինակ, էլեկտրոնային եռամսյակային թերթ, որտեղ ներկայացված կլինեն ՀԿ-ների պլանավորած աշխատանքը, համագործակցության ամենամյա ֆորումներ, որտեղ կազմակերպությունները հնարավորություն կունենային ներկայացնել իրենց աշխատանքները, իրականացնել փորձի փոխանակում, մի ընդհանուր հարթակ, որտեղ երիտասարդական աշխատանքի դաշտում կատարվող աշխատանքները կլինեին հասանելի ու թափանցիկ:

## Ոլորտում ճարվող երիտասարդական աշխատանքների թիրախային խումբը

Ըստ փորձագետների գնահատականների, ինչը նաև հաստատվեց խմբային քննարկումների ընթացքում, երիտասարդական աշխատանքներում ներգրավված են հիմնականում քաղաքաբնակ, մասնագիտական կրթություն ստացող կամ ստացած երիտասարդներ, ում տարիքը չի գերազանցում 25-ը: Հետաքրքիր է նաև, որ մասնագետների գնահատմամբ ՀՀ-ում երիտասարդական աշխատանքներին մասնակցում են ավելի շատ աղջիկները, քան տղաները:

Կարելի է եզրակացնել, որ որոշ խմբեր ավելի քիչ են ներգրավված երիտասարդական աշխատանքում, քան մյուսները.

- Գյուղական համայնքների և մարզային քաղաքների երիտասարդությունը ավելի քիչ է ներգրավված ծրագրերում,

- 25-30 տարեկան երիտասարդները,
- Մասնագիտական կրթություն չունեցող երիտասարդները,
- Ծրագրերում մասնակցած աղջիկների և տղաների հարաբերակցությունը մոտավորապես 60/40 է:

Եթե խոսենք երիտասարդական աշխատանքներին երիտասարդների ներգրավվածության, դրդապատճառների մասին, հատկանշական է, որ խմբային քննարկումներից մեկի մասնակիցները կարևորել են գյուղական երիտասարդների **անտարբերության** հարցը, ինչը դրսևորվում է նրանով, որ գյուղական համայնքում երիտասարդները հետաքրքրված չեն կազմակերպվող միջոցառումներով և ներգրավվելու ցանկություն չեն հայտնում

### Սեջբերում 6. **Խմբային քննարկումից**

«Գնալով մեծանում է երիտասարդների անտարբերությունը ցանկացած հիմնախնդրի շուրջ. և հատկապես առկա անարդարությունների հանդեպ նրանց այդ անտարբերությունն է երբեմն մտահոգիչ, և քանի որ երիտասարդությունը հիմնականում մեր ապագայի երաշխավորն է, շատ ուշադիր պետք է լինել հատկապես այդ հարցում, որպեսզի նրանք զգայուն լինեն հասարակությունում առկա անարդարության վերացման նկատմամբ»:

Երիտասարդները մասնակցում են, որ անցկացվող ծրագրերը անընդհատ կրկնվում են և նորություն չեն ներկայացնում, այդ պատճառով երիտասարդների հետաքրքրությունը հետզհետե նվազում է: Կոնկրետ ծրագրերին կամ միջոցառումներին մասնակցության իրենց շարժառիթը համարում են գիտելիքների ձեռքբերումն ու փորձը:

Հետազոտության ժամանակ իրականացված խմբային քննարկումներին մասնակցել են տվյալ համայնքում իրականացվող երիտասարդական աշխատանքներում ներգրավված երիտասարդները: Որոշ դեպքերում խմբային քննարկումներում երիտասարդները ավելի շուտ ներկայանում են ոչ թե որպես երիտասարդական աշխատող, այլ որպես որևէ ծրագրի շահառու, երիտասարդ, այն դեպքում երբ հարցը հնչում էր կոնկրետ իրենց՝ որպես երիտասարդական աշխատողի կարիքներին ուղղված, երիտասարդները հարցին տալիս էին միջնորդավորված պատասխաններ՝ խոսելով համայնքի ընդհանուր երիտասարդության կարիքների մասին:

# ԾԱՍ II. Երիտասարդ աշխատողի ներկայիս կարգավիճակն ու գործունեությունը

## Երիտասարդական աշխատողի կերպարի սարքեր

Հետազոտության մասնակիցների խոսքում նկատվում էր երիտասարդական աշխատողի կերպարի շրջանակների կոնկրետացման, սահմանման հակում: Ըստ մասնակիցներից ոմանց դիքքորոշման՝ երիտասարդական աշխատողը պետք է լինի վճարովի հաստիքով, կոնկրետ գործընթացներում ներգրավված աշխատակից: Այդպես շահագրգիռ կողմերը ցանկանում են երաշխավորել երիտասարդական աշխատողի մինիմալ ծախսերի ապահովումը և մարդուն ֆինանսական հողի վրա կապելով երիտասարդական աշխատանքի ինստիտուտին՝ ապահովել կայուն և շարունակական աշխատանք երիտասարդների հետ և նրանց խնդիրների ուղղությամբ: Այն պայմաններում, երբ Հայաստանում բնակչության շրջանում լայն տարածում չի գտնում կամավորության ինքնակամ հակվածությունը, ինչը դրսևորվում է, օրինակ, փողոցների շարունակական աղտոտման երևույթով, այս պահին երիտասարդ աշխատողին մինիմալ աշխատավարձով ապահովելը կարող է նպաստել ինստիտուտի կայացմանը և ինստիտուտին բնորոշ արժեքների արմատացմանը մեր հասարակության մեջ: Ըստ մեր հետազոտության ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցների՝ իրենցից շատերը սկսել են երիտասարդական աշխատանքով զբաղվել երիտասարդական կազմակերպության կողմից որևէ դասընթացի մասնակցելու արդյունքում: Մեր հասարակությունում դեռևս թույլ հիմքերի վրա է կամավորությունը, այնուամենայնիվ, վերոնշյալից նկատում ենք, որ սոցիալական աշխատանքներում ներգրավումը, ինչպիսին է, օրինակ, երիտասարդական աշխատանքը, գրավում է երիտասարդներին, և այդպիսով, երիտասարդական աշխատանքի ինստիտուտի շարունակական գործունեության շնորհիվ հնարավոր է աստիճանաբար սերմանել ՀՀ երիտասար-

դության մեջ երիտասարդական աշխատանքի ուղենիշերը՝ այդպիսով, ապահովելով երիտասարդական աշխատողների խմբերում կամավորների առկայությունը:

Այժմ անդրադառնանք հետազոտության մասնակիցների պատկերացումներին երիտասարդական աշխատողի կերպարի, գործունեության վերաբերյալ: Թվում է, թե երիտասարդական աշխատողին բնորոշ **որակներն** առանձնապես չպետք է տարբերվեն այլ աշխատանքային միջավայրերում գործող ոչ ֆորմալ կանոններից, սակայն հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ այդ որակներն իրենց բնույթով առանձնահատուկ են, օրինակ՝

#### Մեջբերում 7. Առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից

«Արդյունավետ երիտասարդական աշխատող լինելու համար անհրաժեշտ է երեք բան. լավ լսելու ունակություն, լավ հումորի զգացում և անսահման համբերություն»:

Կախված երիտասարդական դաշտում գործող կազմակերպությունների ոլորտային բազմազանությունից՝ տարբեր են նաև առաջադրվող անձնային և մասնագիտական պահանջները, այնուամենայնիվ, կան նաև հիմնական նմանություններ: Երիտասարդների մոտ **շփվելու ունակության** առկայությունը առանցքային են համարում բոլոր ճյուղերում:

Չնայած հետազոտության մասնակիցների կողմից հնչած սահմանումների բազմազանությանը՝ կարելի է առանձնացնել հետևյալ ուղղությունները, որոնք, ըստ նրանց, առավել բնութագրում են երիտասարդական աշխատողին: Առավել հաճախ հնչած պատասխանների մեջ կարելի է առանձնացնել՝ *«Երիտասարդական աշխատողները չպետք է միայն աշխատեն խնդիրներ ունեցող երիտասարդների հետ, նրանք պետք է ուղղորդեն և աջակցեն բոլոր երիտասարդներին, որպեսզի վերջիններս կարողանան բացահայտել իրենց ներուժը»*:

Այսկերպ ոլորտի ներկայացուցիչները բարձրացնում են մի կարևոր հարց՝ արդյոք Երիտասարդական աշխատողը պե՞տք է աշխատի այն երիտասարդների հետ, ովքեր իրենց դիմել են, նրանց հետ, ովքեր ունեն հայտնաբերված խնդիրներ, երիտասարդական աշխատողը և ինքը պետք է ուսումնասիրի երիտասարդների կարիքները և արձագանքի՝ ըստ այդ կա-

րիքների: Այս հարցը իրականում պահանջում է ինչպես երիտասարդական աշխատողի մասնագիտական պատրաստվածություն, անձնական պատրաստակամություն, այնպես էլ ֆինանսական միջոցներ, որոնք կարող են լուծվել երիտասարդական աշխատանքի ռեսուրսների ինստիտուցիոնալ մակարդակում օպտիմալ բաշխման միջոցով:

*«Երիտասարդական աշխատողները պետք է խթանեն երիտասարդների ակտիվ մասնակցությունը տեղական մակարդակում, համայնքներում ընթացող իրադարձություններին»*, - ոչ պակաս տարածված կարծիքը ենթադրում է երիտասարդական աշխատողի իրազեկվածություն համայնքային գործընթացներից ու իրադարձություններից և դրանցում երիտասարդի դերի ու շահերի մասին համակարգված մոտեցման առկայություն, ինչը կարող է ապահովվել ինչպես տեղեկատվությամբ միջինստիտուցիոնալ փոխանակման միջոցով, այնպես էլ կոնկրետ երիտասարդական աշխատողի՝ ոլորտում որոշակի ժամանակ գործելու փաստով:

Հաջորդ առավել հաճախ հնչած տեսակետն է. «Երիտասարդական աշխատանքը պետք է որոշակի գործիքներ տրամադրի երիտասարդներին աշխատաշուկա մուտք գործելու համար, սակայն չպետք է սահմանափակվի միայն այդ գործառույթով»: Այսինքն՝ երիտասարդի՝ աշխատաշուկա մուտք գործելու համար որոշակի գործիքների առկայությունը կարևոր է, սակայն երիտասարդական աշխատողը չպետք է սահմանափակվի երիտասարդների աշխատանքային գործունեությամբ միայն: Խոսքը գնում է ներկայումս երիտասարդական ոլորտում երիտասարդական աշխատողների կողմից տարվող աշխատանքների ընդլայնման մասին:

Հետազոտության մասնակիցների շրջանում տարածված է եղել նաև այն տեսակետը, որ «Երիտասարդական աշխատանքը ոչ ֆորմալ կրթության սեկտորներից մեկն է, որի հիմնական գործառնական ուղղություններն են երիտասարդների ինքնուրույնությունը, մասնակցությունը և ներգրավվածությունը»: Երիտասարդական աշխատանքն ասոցացնել ոչ ֆորմալ կրթության հետ շատ նեղացնում է ինստիտուտի նշանակությունը: Կարող ենք եզրակացնել, որ երիտասարդական աշխատանքը՝ որպես գործող ինստիտուտ, որի բուն նշանակությունն է հասարակության մեջ երիտասարդության սեզմնետի առողջ գործառնության ապահովումը հանուն երկրի բարեկեցության, հետազոտության մասնակիցների՝ ներկայիս որոշ

երիտասարդական աշխատողների, քաղաքականություն մշակողների և այլ անձանց մի մասի պատկերացումներում գոյություն չունի: Ինստիտուտի կայացման համար անհրաժեշտ է երիտասարդական աշխատանքի վերաբերյալ ամբողջական պատկերացման ձևավորում՝ ոլորտում ներգրավված կառույցների, մասնակիցների շրջանում:

## Երիտասարդական աշխատողի անձնական և մասնագիտական որակներ

Եթե անձնային որակների հետ կապված երիտասարդական աշխատողները հիմնականում համակարծիք են, ապա որոշակի տարբերություններ կան մասնագիտական որակների հետ կապված, որոնք նախ և առաջ պայմանավորված են ոլորտային տարբերություններով:

Աղյուսակ 5. Երիտասարդական աշխատողին ներկայացվող պահանջներ

Անձնային որակներ	Մասնագիտական որակներ
Հարգալից վերաբերմունք մյուսների նկատմամբ	Երիտասարդների հետ աշխատելու գիտելիք և փորձառություն, և այդ գիտելիքները ինպաստ ծրագրի իրականացման օգտագործելու հնտություններ
Հաղորդակցման, խմբում աշխատելու հմտություններ	Ձեռք բերված ակադեմիական և ոչ ակադեմիական գիտելիքները ի նպաստ երիտասարդական աշխատանքի կիրառելու հնտություն
Լավ լսելու ունակություն/ ակտիվ լսելու տեխնիկա	Ծրագրի մշակման հնտություններ
Համբերություն	ՏՀՏ կիրառման բազային հնտություններ
Ազնվություն	Ղեկավարման հնտություններ
Պատասխանատվության զգացում	Երիտասարդական քաղաքականության իմացություն/ փոփոխությունների հետևող
Մյուսների հանդեպ ոչ քննադատական մոտեցում	Ինքնագնահատման և մոնիթորինգի իրականացման հնտություններ
Նպատակասլացություն	Դասավանդման հնտություններ
Մարտահրավերներին դիմակայելու ունակություն/ ճգնաժամային իրավիճակներում կողմնորոշում	Առանձին ոլորտների իմացություն՝ ըստ այն ոլորտների, որոնցում ներգրավված են
Օգնելու, աջակցելու պատրաստակամություն	Ծրագրի քայլերի հաջորդականության պահպանում, ժամանակի կառավարման հնտություններ

Իրավիճակին ճիշտ արձագանքելու հմտություն, առկա խնդիրների տրամաբանական տարբերակման կարողություն	Բանակցություններ վարելու հմտություններ
Ճկունություն	
Հունորի զգացում	
Առաջնորդությանցիղ	

Այս հմտություններից շատերը, ինչպիսին են՝ հաղորդակցման և խմբում աշխատելու հմտությունները, շատ են կարևորվում գործատուների կողմից, մինչդեռ այնպիսի անձնային և սոցիալական որակներ, ինչպիսին են՝ ինքնաճանաչողությունը, խնդիրներ լուծելու ունակությունը և բանակցություններ վարելու ունակությունը մեծացնում են երիտասարդների՝ հասուն կյանք հաջողակ անցում կատարելու հավանականությունը:

Երիտասարդական աշխատողները պետք է հետևեն նաև մի շարք էթիկական նորմերի, որոնցից հետագոտության մասնակիցները առանձնացրեցին հետևյալները՝

- **հավասարը-հավասարին** մոտեցում՝ երիտասարդական աշխատողները պետք է երիտասարդների հետ աշխատեն որպես հավասարի հետ, այլ ոչ թե որպես ենթակա, առավել խոցելի,
- **գաղտնիության պահպանում**՝ երիտասարդական աշխատողները պետք է երաշխավորեն երիտասարդներից ստացված տեղեկատվության գաղտնիությունը,
- **անհատական մոտեցում**՝ երիտասարդական աշխատողները, աշխատելով երիտասարդների հետ, նախ և առաջ պետք է տեղյակ լինեն յուրաքանչյուր երիտասարդի իրական կարիքներից, խնդիրներից և աշխատեն նրանց հետ՝ հաշվի առնելով այդ խնդիրները՝ նպատակ ունենալով լուծել դրանք:

## Երիտասարդական աշխատողի կարգավիճակ

Հետագոտությանը մասնակցած երիտասարդական աշխատողները նշում են, որ տեղեկատվության տարածման, աշխատանքի ընդունման որևէ ընթացակարգ գոյություն չունի: Երիտասարդ աշխատողի գործունեությունը հետագոտության մասնակիցների կողմից ընկալվում է որպես աշխատանք՝ թեկուզև մինիմալ աշխատավարձով: Հավանաբար, մասնակիցներ-



րի կարծիքով, այսկերպ կարող է ապահովվել երիտասարդների հետ կա-  
յուն ու շարունակական աշխատանքը:

Երիտասարդական աշխատանքով զբաղվող կազմակերպությունները  
երիտասարդական աշխատողներին ներգրավում են աշխատանքի կամ  
անդամագրության միջոցով: Ստորև բերված գծապատկերում ներկայաց-  
ված են, թե աշխատանքի տեղավորման կամ անդամագրության մասին  
տեղեկատվության տարածման ինչպիսի աղբյուրներ և ընթացակարգեր  
են կիրառվում ներկայումս երիտասարդական աշխատանքով զբաղվող  
կազմակերպություններում:

**Այլուսակ 6. Երիտասարդական տեղեկատվության տարածումը՝  
ըստ կազմակերպությունների**

**ԵԿ-ների՝ երիտասարդներին ուղղված տեղեկատվության  
տարածման մեխանիզմները**

Երիտասարդական հասարակական կազ- մակերպություններ	<ol style="list-style-type: none"> <li>1. Անձնական կապեր, ծանոթություններ</li> <li>2. Հանդիպումների և միջոցառումների ընթացքում</li> <li>3. Հայտարարություններ կրթական հաս- տատություններում</li> <li>4. Հայտարարություններ մասնավոր և պետական ընկերություններում</li> <li>5. Համացանց, սոցիալական ցանց</li> <li>6. ԶԼՄ-ներ</li> </ol>
Պետական կառույցներին կից գործող երի- տասարդական կազմակերպություններ	<ol style="list-style-type: none"> <li>1. Պաշտոնական հայտարարությունների տարածում պետական կառույցների կայքէջերում և համացանցում, սո- ցիալական ցանցերում</li> <li>2. Պաշտոնական հայտարարությունների տարածում պետական կառույցներում</li> <li>3. Հանդիպումների և միջոցառումների ընթացքում</li> <li>4. Հայտարարություններ կրթական հաս- տատություններում</li> <li>5. ԶԼՄ-ներ</li> </ol>

<p>Քաղաքական կուսակցություններին կից գործող երիտասարդական կազմակերպություններ</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Աշխատանք երիտասարդների հետ համայնքներում, ՏԻՄ-երում</li> <li>2. Պաշտոնական հայտարարությունների տարածում պետական կառույցների կայքէջերում և համացանցում, սոցիալական ցանցերում</li> <li>3. Հանդիպումների և միջոցառումների ընթացքում</li> <li>4. Հայտարարություններ կրթական հաստատություններում</li> <li>5. ՁԼՄ-ներ</li> </ol>
<p>Կրթական կառույցներին կից գործող երիտասարդական կազմակերպություններ՝ ՈւԽԸ, ՈւԳԸ</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Հանդիպումներ, սեմինարներ</li> <li>2. Անձնական կապեր, ծանոթություններ</li> <li>3. Հայտարարություններ կրթական հաստատություններում</li> </ol>
<p>Առաքելական եկեղեցուն կից գործող երիտասարդական կազմակերպություններ</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Կրոնական տոների հետ կապված զանգվածային միջոցառումներ</li> <li>2. Համայնքային աշխատանք, քարոզչություն</li> <li>3. Բարեգործական միջոցառումների ժամանակ քարոզչություն</li> </ol>

## Երիտասարդական աշխատողի գործառնություններ

Ըստ փորձագետների՝ բոլոր գործողություններում երիտասարդական աշխատողները պետք է խրախուսեն և օգնեն երիտասարդներին որոշումներ կայացնել և պատասխանատվություն կրել կայացրած որոշման համար: Խմբային քննարկումների մասնակիցների կարծիքով երիտասարդական աշխատանքը նաև հնարավորություն է տալիս ներգրավել և որոշակի գործողություններ իրականացնել հանրության ավելի լայն շրջանակներում, համայնքում՝ աջակցելով և փորձելով լուծել այն խնդիրները, որոնք իրենք ի վիճակի են լուծել: Երիտասարդական աշխատողները առանցքային դեր են խաղում այն հարցում, որ երիտասարդները ձայնի իրավունք ունենան իրենց համայնքներում և մասնակցեն այն որոշումների կայացմանը, որոնք առնչվում են իրենց հետ: Վստահության և հարգանքի վրա հիմնված մասնագիտական կապերի և երիտասարդների կյանքի իրողությունը հասկանալու միջոցով երիտասարդական աշխատողները խրախուսում և մարտահրավեր են նետում երիտասարդներին՝ մտածելու այն մասին, թե ինչի

են ուզում հասնել, մտածել սեփական վարքագծի մասին և եզրակացնել՝ արդյոք այն ընտրությունը, որ նրանք արել են, կօգնի՞՞ հասնել ուզած արդյունքին: Նրանք օգնում են երիտասարդներին աշխատել մյուսների հետ:

Տարբեր երիտասարդական ՀԿ-ների հետ համագործակցող ուսանողները կարծում են, որ երիտասարդական աշխատանքի հիմնական գործառույթը երիտասարդների ժամանցի կազմակերպումն է: «Հիմնականում աշխատանքներ պետք է իրականացնեն դրսից, մենք մեր ուժերով մնացածը կկարողանանք կազմակերպել մեր համայնքում: Գյուղում ունենք երիտասարդներ, ովքեր միշտ կազմակերպում են ու գրեթե բոլոր միջոցառումները, որ էստեղ տեղի են ունեում, իրենք են իրականացնում, բայց մենք կարիք ունենք, որ դրսից գան մարդիկ ու կոորդինացնեն այդ ամենը, նոր գաղափարներով հանդես գան»-, ֆոկլուս-խմբային քննարկման մասնակից:

Երիտասարդական աշխատողների կողմից իրականացվող գործառույթների տարբերությունը հիմնականում պայմանավորված է երիտասարդական կազմակերպության կամ կոնկրետ ծրագրի իրականացման ոլորտային առանձնահատկություններով: Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ, անկախ ուղղվածությունից, ծրագրի իրագործումը հիմնականում նույն փուլերով է անցնում (ծրագրի նախագծում, կազմակերպում, իրագործում, ամփոփում/գնահատում), երիտասարդական ՀԿ-ների գործառույթները ունեն բազմաթիվ նմանություններ: Մասնավորապես փորձագետներից մեկը կարևորել է երիտասարդական աշխատողների հետևյալ գործառույթները.

#### Մեջբերում 8. Փորձագիտական հարցազրույցից

«Կարող է լինել կազմակերպիչ, ուղղորդողի դերում, ուսուցանողի դերում: Երիտասարդական աշխատանքը ընդարձակ հասկացություն է: Երիտասարդական աշխատողից պահանջվում է հասկանալ երիտասարդների վարքագիծը, ուսումնասիրել, բացահայտել երիտասարդների կարիքները և ստեղծել բաց դաշտ՝ ազատ շփվելու, «փնչու՞» հարցերը տալու»:

Փորձագետները կարևորել են նաև երիտասարդական աշխատողի՝ պետական մարմինների և երիտասարդների միջև կապի ապահովման գործառույթը.

### Մեջբերում 9. Փորձագիտական հարցազրույցից

«Երիտասարդական աշխատողը ուղղորդում է, սահմանում է ստանդարտներ, ապահովում է աջակցություն, ապահովում է կապ պետական մարմինների ու անհատների միջև: Ուրտները տարբեր են, և դրա հետ կապված՝ փոփոխվում են գործառնությունները: Հենց դա էլ դժվարացնում է տալ կոնկրետ սահմանումը»:

| 43 |

Երիտասարդական աշխատողների կողմից կարևորվել են միջանձնային շփման ապահովման և ինքնարտահայտման բարենպաստ միջավայրի ստեղծման գործառնությունները:

### Մեջբերում 10. Փորձագիտական հարցազրույցից

«Այս պահի դրությամբ ես կասեի, որ երիտասարդական աշխատողը երիտասարդների արտահայտվելու կարիքն է բավարարում, շատ լայն, տարբեր թեմաներով՝ մարդու իրավունքներ, էկոլոգիա, միջմշակութային, այսինքն՝ տարբեր հարցերի շուրջ երիտասարդների արտահայտվելու կարիքն է, շփվելու կարիքն է... շատ երիտասարդներ այսօր ունեն շփման մեծ կարիք և չունեն համապատասխան տեղեր, հետևաբար երիտասարդական աշխատանքը միտված է իրենց համար այդ շփման տեղերը ապահովելուն, երկրորդ գործառնությոնը քաղաքացիական կրթությունն է:»

Հատկանշական է, որ երիտասարդական աշխատողների գործառնությունները տարբերվում են նաև ըստ մարզերի: Այսպես օրինակ՝ մայրաքաղաքից հեռու գտնվող մարզերում երիտասարդական աշխատողների համար երիտասարդական աշխատանքի առաջնային գործառնություններից մեկը ժամանցի կազմակերպումն է: Երիտասարդները համակարծիք են, որ՝

### Մեջբերում 11. Ֆև քննարկումից, Սյունիք

«...Երիտասարդական աշխատանքի հիմնական գործառնությոնը ժամանցի կազմակերպումն է: Նաև պետք է երիտասարդներին օգնի մասնագիտական կողմնորոշման հարցում, խթանի երիտասարդների ներուժն ու ընդգրկումը կամավորական աշխատանքներում, զբաղվածությամբ ապահովման հարցում: Գյուղում նախաձեռնող, համախմբող անձ է հարկավոր»:

Ըստ հետազոտության արդյունքների՝ երիտասարդական աշխատանքների իրականացման ընթացքում երիտասարդական աշխատողները իրականացնում են հետևյալ պարտականությունները և գործառույթները՝

1. Աշխատանքների համակարգում, դեկավարում, վարչարարական գործառույթներ,
2. Տեխնիկական գործառույթներ,
3. Արտաքին կապերի ապահովում, տեղեկատվության տրամադրում/տարածում,
4. Կազմակերպչական գործառույթներ,
5. Մանկավարժական գործունեություն, դասընթացների սեմինարների վարում,
6. Երիտասարդներին խորհրդատվության տրամադրում և ուղղորդում:

# ԾԱՍ ԻՎ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՅԱԳՄԱՆ ՆԱԽԱՊՐՅԱԼՆԵՐԸ և ԻՐԱՎԱԿԱՐՆԵՐԸ ՆՆ-ՈՒՄ

## ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԱՐՔԱԳՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԻԽՄԻՆԵՐԸ ՆՂՅԱՍՏԱՆՈՒՄ

Երիտասարդական աշխատանքի ինստիտուտի կայացման համար Հայաստանում արդեն իսկ առկա են նախադրյալներ. մասնավորապես, հատկանշական է իրավական հիմքի առկայությունը՝ ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը, որտեղ սահմանված է «երիտասարդական աշխատող» հասկացությունը: Ոլորտի փորձագետների և երիտասարդական կառույցների ներկայացուցիչների կարծիքով ինստիտուտի կայացման հաջորդ քայլով անհրաժեշտ է մշակել հայեցակարգ և գործողությունների ծրագիր՝ ուղղված երիտասարդների մասնակցության մակարդակի բարձրացմանը: Այդ ծրագիրը պետք է հիմնված լինի այժմյան երիտասարդության իրական կարիքների ու պահանջների վրա, որոնց թվում են զբաղվածությունը, մասնագիտական կողմնորոշումը, մասնագիտական և անձնական որակների շարունակական զարգացումը, ինքնաարտահայտման հնտությունների ձևավորումը, ինչը իրականում համընկնում է ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հիմնական գերակայությունների<sup>16</sup> հետ՝

- 1) «Քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության գործընթացների խթանում»,
- 2) «Երիտասարդների զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ»,
- 3) «Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խթանում»,

<sup>16</sup> Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թվականների ռազմավարությունը, էջ 8


- 4) «Երիտասարդների հոգևոր-մշակութային արժեքների զարգացում և ռազմահայրենասիրական դաստիարակություն»,
- 5) «Կրթության շարունակականություն և ոչ ֆորմալ կրթության ճանաչելիություն»:

## Երիտասարդական աշխատանքի իրականացման ներկայիս ֆինանսական հիմք

Որպես կանոն, երիտասարդական կազմակերպությունները հիմնականում իրականացնում են կարճատև ֆինանսավորմամբ աշխատանքներ, որը ըստ երիտասարդական աշխատողների, երիտասարդական աշխատանքի ինստիտուտի կայացման հիմնական մարտահրավերներից մեկն է, քանի որ չի նպաստում երիտասարդական աշխատանքի իրականացման կայունությանն ու շարունակականությանը:

Ըստ 2014թ-ին իրականացված հետազոտության արդյունքների՝ երիտասարդական ՀԿ-ների բաշխվածությունն ըստ ֆինանսավորման աղբյուրների ներկայացված է ստորև.

Գծապատկեր 4. Կազմակերպությունների ֆինանսավորման աղբյուրները 2013թ. (տոկոսային)



Ինչպես տեսնում ենք գծապատկերից, երիտասարդական ՀԿ ֆինանսավորման հիմնական աղբյուրները միջազգային կազմակերպություններն են:

Կոնկրետ ֆինանսավորող կազմակերպություններին անդրադառնալով՝ առավել հաճախ նշվում են՝ պետական ֆինանսավորողների թվում՝ ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ապա Մշակույթի, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Պաշտպանության նախարարությունները, իսկ միջազգային ֆինանսավորողների թվում առաջատարն է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը, որին հաջորդում են «Քաունթերփարթ Ինթերնեշնլը», Եվրամիությունը և «Վորլդ Վիժն» կազմակերպությունը: Հետազոտության մասնակից ԵՀԿ ղեկավարները մատնանշում են այն հանգամանքը, որ որպես կանոն ֆինանսավորում են ստանում մեկ-երկու աղբյուրից<sup>17</sup>:

Այստեղ պետք է նշել, թե որ դոնորը ինչ թեմատիկ ուղղվածության ծրագիր/ծրագրեր է ֆինանսավորում:

Մեկ աղբյուրից կախվածությունը և դրամաշնորհային ծրագրերով ֆինանսավորումը ԵՀԿ-ներին, ըստ իրենց հայեցողության ծախսեր կատարելու և խնդիրներ լուծելու առումով, ճկունություն հանդես բերելու հնարավորություն չեն տալիս:

**Մեջբերում 12. Առանցքային տեղեկատուի հետ հարցազրույցից**

«...փոխանակ ծրագրային պլանավորում լինի, անում են գրանտային պլանավորում: ...Մենք մեծամասշտաբ ծրագրերով չենք մտածում: Այնքան ենք սովոր գրանտային, էպիզոդիկ ծրագրերի... Գրանտը ինչով որ հայտարարվեց, դա ենք անում, ռազմավարական տեսլական՝ նպատակ, առաքելություն, կորած է»:

Ինչպես նշում են փորձագետները և երիտասարդական ՀԿ ղեկավարները, երիտասարդական աշխատանքի իրականացման համար հաճախ նեղ մասնագիտական ուղղվածություն ունեցող երիտասարդական աշխատողների կարիք է լինում: Ներկայումս իրավիճակն այնպիսին է, որ միևնույն

<sup>17</sup> Երիտասարդական կազմակերպությունների քարտեզագրում և պետության կողմից ֆինանսավորվող երիտասարդական դրամաշնորհային ծրագրերի արդյունավետության գնահատում, էջ 41



մարդը, ով թեև փորձառու է, ստիպված է իրականացնել միաժամանակ մի քանի աշխատանք՝ հոգեբանի, տնտեսագետի, սոցիալական աշխատողի կամ մանկավարժի: Որպես իրենց կազմակերպության նեղ մասնագիտական մտավոր ներուժի կարիքներ՝ հետազոտության մասնակիցները նշում են նեղ ոլորտներում աշխատող երիտասարդ մասնակիցների՝

| 48 |

- պետական կառավարում,
- սեռական դաստիարակություն,
- տեղեկատվական տեխնոլոգիաներ:

Հետազոտության արդյունքների համաձայն՝ այսօր կարիք կա նաև երիտասարդական աշխատողների, որոնք մասնագիտացված աշխատանք կկատարեն հետևյալ խոցելի խմբերի երիտասարդների հետ՝

- իրավախախտ վարք ունեցող երիտասարդներ,
- որևէ կախվածություն ունեցող երիտասարդներ,
- սոցիալական ներառման սահմանափակ հնարավորություններ ունեցող երիտասարդներ,
- վերադարձած աշխատանքային միգրանտներ:

## **Երիտասարդական աշխատողի նկատմամբ մասնագիտական և էթիկական դահանջները, ինչդեռ նաև դրանց գնահատման գործիքները**

Հետազոտությանը մասնակցած փորձագետները նշում են, որ նախքան երիտասարդական աշխատանքի սահմանմանն անդրադառնալը պետք է նախ հասկանալ, թե երիտասարդական քաղաքականության համատեքստում ինչպես պետք է այն դիտարկել. արդյոք երիտասարդական աշխատողները պե՞տք է լինեն հատուկ կրթություն ստացած կամ վերապատրաստում անցած մասնագետներ, թե՞ նրանք կարող են լինել նաև այլ մասնագիտությունների տեր մարդիկ՝ հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, մանկավարժներ և այլն: Այժմ երիտասարդական աշխատողների նկատմամբ որևէ անձնային և մասնագիտական պահանջների շրջանակ չի կիրառվում՝ երիտասարդական աշխատանքով զբաղվում են երիտա-

սարդության ոլորտում ներգրավված մարդիկ, ովքեր ունեն տարբեր մասնագիտություններ: Այսօր գործում են նաև որոշակի վերապատրաստման դասընթացներ՝ ուղղված երիտասարդական աշխատողների մասնագիտական հմտությունների ձեռքբերմանը: Այդ դասընթացները հիմնականում ուղղված են դասընթացավարի որակների ձևավորմանը, որոնք իրականացվում են ինչպես պետական ֆինանսավորում ստացած ծրագրերի, այնպես էլ միջազգային ծրագրերի շրջանակներում:

Ըստ փորձագետների՝ երիտասարդական աշխատանքի ուսուցման ավանդական մոդելների հետ մեկտեղ անհրաժեշտ է կիրառել ոչ ավանդական և առավել մասնակցային մոդելներ:

**Մեջբերում 13. Մեջբերում փորձագիտական հարցազրույցից**

«Դասընթացը երիտասարդական աշխատանքի մի մասն է որպես այդպիսին կամ զնալ Ծաղկածորում դասընթաց անել, ուրախանալ հետ գալը, բայց երիտասարդական աշխատանքի բավական մեծ մասը, այսպես ասած գրասենյակից դուրս աշխատանքն է (outreach), զնալ, պեղել իրենց կարիքները, ուսուցում անել, բայց դրսում էլ կարող ես ուսուցում անել, ասենք հնարավոր է կոնկրետ համայնքում կամ թաղամասում մտել ինչ-որ խաղ խաղալ իրենց համար, որպեսզի երիտասարդները դրանից որևէ բան սովորեն կամ օգուտ քաղեն, երկարատև ինչ-որ հարաբերություններ կառուցեն իրենց հետ և իրենք քիչ-քիչ աճեն այդ ճանապարհին և իրենց վարվելակերպը ինչ-որ տեղ նաև փոխվի»:

Փորձագետները նշում են նաև, որ նախքան դասավանդման մեթոդների և ուսուցման մոդելների մասին մտածելը, անհրաժեշտ է ստեղծել հավատարմագրված փորձառու կառույցներ, որոնք պետք է պատասխանատու լինեն դասընթացների անցկացման համար: Ներկայումս այդ կառույցները ՀՀ-ում սակավաթիվ են: Մասնավորապես կան կառույցներ, որոնք մասնագիտացած են դասընթացավարների և ակումբավարների վերապատրաստման գործում:

Ըստ փորձագետների՝ անհրաժեշտ է ստեղծել մեկ կրթական տարածք, որտեղ երիտասարդները կարող են ձեռք բերել երիտասարդական աշխատանքի համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, իսկ երիտասարդական աշխատողները՝ վերապատրաստվել:

Ըստ մասնագետների՝ երիտասարդական աշխատանքի հայեցակարգի մշակման դեպքում պետք է հստակ սահմանել երիտասարդական աշխատանքի՝ որպես մասնագիտության հիմնական առանձնահատկությունները և պահանջները, ինչպես նաև այդ մասնագիտության էթիկայի կոդեքսը:

**Մեջբերում 14. Մեջբերում փորձագիտական հարցազրույցից**

| 50 |

«...Հայաստանում իրականում, ով ուզում է, իրեն համարում է երիտասարդական աշխատող: Մի կողմից դա վատ չի, մյուս կողմից, այնուամենայնիվ, ես կարծում եմ, որ պիտի լինեն ինչ-որ ստանդարտներ, կրթական ճանապարհ անցած ինչ-որ մարդիկ, ովքեր որ համապատասխանեն երիտասարդական աշխատողի պրոֆիլին»:

Փորձագետները գրույցների ընթացքում արտահայտել են մի շարք պահանջներ, որոնք պետք է ընկած լինեն երիտասարդական աշխատանքի սահմանման և իրականացման հիմքում.

**Աղյուսակ 7. Երիտասարդական աշխատանքից ոլորտի ներկայացուցիչների ակնկալիքները**

<b>Բովանդակային կողմից</b>	<b>Մասնագիտական մակարդակ</b>
Երիտասարդական աշխատանքը անշահախնդրորեն պետք է միտված լինի երիտասարդների՝ սեփական իրավունքների ուղղությամբ իրազեկվածության բարձրացմանը	Երիտասարդական աշխատանքի աշխատանքային էթիկա՝ երիտասարդների հետ աշխատանքում զերծ մնալ անձնավորված մոտեցումից
Իրավապաշտպանության ոլորտում գործող ՀԿ-ների մասին տեղեկատվության շտեմարանի ձևավորում՝ ցանկացած պահի նրանց պաշտպանության կամ խորհրդակցության կարիք ունեցող երիտասարդների հետ կապելու նպատակով	Երիտասարդական աշխատանքի գործընթացների գնահատման մշակված չափանիշներ, որոնց համաձայն կոնկրետ կառույցների կցված երիտասարդական աշխատողների հաշվետվություններ կներկայացվեն՝ ըստ կատարված աշխատանքի և ընթացակարգի
Աջակցություն սոցիալական արդարությանը երիտասարդների համար և հասարակության մեջ՝ խտրականության դեմ պայքարելու միջոցով	Մարդու իրավունքների հանդեպ հարգանք, երիտասարդի ներուժի ճիշտ գնահատում և չկոռունպացված աշխատանք
Երիտասարդների զբաղվածության խնդրի լուծում	Երիտասարդական աշխատանքը պետք է լինի թափանցիկ և հաշվետվողական
Երիտասարդների միավորում մի գաղափարի շուրջ և առաջնորդում	Երիտասարդների կարիքների գնահատման մոտեցումների առկայություն

# Երիտասարդական աշխատանքի ինստիտուտի կայացման մարտահրավերներ

## Մասնակիցների որոշակիացման մարտահրավեր

Մասնակիցների մի մասը գտնում է, որ երիտասարդական աշխատանքի նպատակները, խնդիրները և նույնիսկ գործունեության հիմնական ոլորտները կանոնակարգման և հստակեցման կարիք ունեն և պետք է հստակ ամրագրվեն պետական երիտասարդական քաղաքականության ռազմավարության մեջ: Մյուս մասը՝ հակառակը, պնդում է, որ ցանկացած կանոնակարգում և երիտասարդական աշխատանքի նպատակների մանրամասն նկարագրություն նեղացնում է երիտասարդական աշխատողների գործունեության շրջանակը և գործառույթները և կարող է լքջորեն անդրադառնալ երիտասարդների՝ այս ոլորտում աշխատելու մոտիվացիայի վրա:

## Տեղեկատվության պակասի մարտահրավեր

Երիտասարդական աշխատանքի գնահատման գործիքներ դեռևս հստակ սահմանված չեն: Հիմնական մարտահրավերը, որը կապված է գնահատման հետ, այն է, որ չկա հստակ վիճակագրություն երիտասարդական աշխատանքի հիմնական շահառուների՝ երիտասարդական ներգրավվածության վերաբերյալ: Ընդ որում, այդ վիճակագրությունը կաղում է թե՛ տեղական, թե՛ հանրապետական մակարդակով: Թեպետ երիտասարդական ՀԿ-ները որոշակի պատկերացում ունեն, թե ծրագրերի իրականացման ընթացքում ինչքան երիտասարդ է մասնակցում, բայց այդ թվերը շատ մոտավոր են: Անհրաժեշտ է, սակայն, հաշվի առնել, որ հարցման մասնակիցները հաճախ չեն տարբերակում երիտասարդական ՀԿ անդամ կամ երիտասարդական աշխատանքի շահառու հասկացությունները: Հաճախ, եթե երիտասարդը մասնակցում է ծրագրերին, ՀԿ-ները նրան ընկալում են որպես կազմակերպության անդամ, ոչ թե երիտասարդական աշխատանքի շահառու: Ընդ որում, չափելի ցուցիչներ (ինդիկատորներ) մշակելու համար պետք է հաշվի առնել հետևյալ քանակական ցուցանիշների մասին շարունակական (ամնվազն տարեկան) վիճակագրություն ունենալու անհրաժեշտությունը:

1. Երիտասարդների ներգրավվածությունը երիտասարդական աշխատանքում,
2. Երիտասարդների անդամությունը երիտասարդական ՀԿ-ներին և այլ երիտասարդական կազմակերպություններին,
3. Երիտասարդական աշխատանքով զբաղվող հաստատությունների թիվը,
4. Երիտասարդական աշխատանքով զբաղվող կազմակերպությունների քանակը՝ ըստ մարզերի և համայնքների:

Վիճակագրական տվյալների հավաքագրման նպատակով անրաժեշտ է սահմանել երիտասարդական աշխատանքի շահառուներին, և նույնակամացնել երիտասարդական աշխատանքներին առնչվող ծրագրերն ու միջոցառումները՝ պարբերաբար հավաքագրելով նման գործողությունների մասնակից երիտասարդների առնվազն թվային տեղեկատվությունը:

**Երիտասարդական աշխատանքի արդյունքների ազդեցության պահպանման և շարունակականության մարտահրավեր**

Գնահատման հետ կապված երկրորդ խնդիրը իրականացվող աշխատանքների շարունակականությունն ու կայունությունն է: Ծրագրերը ոչ միշտ են պահպանում իրենց թիրախային խումբը, հաճախ այդ թիրախային խմբերը փոխվում են:

Նույն խնդիրը վերաբերում է նաև կրթական, կրոնական և այլ կազմակերպություններին:

Միայն լայնածավալ հետազոտություն իրականացնելու դեպքում հնարավոր է հավաքել վիճակագրություն հետևյալ ուղղություններով.

1. Երիտասարդական կազմակերպությունների զրանցված անդամների թիվ, ուսանողական, կրոնական, քաղաքական կազմակերպություններում անդամագրված երիտասարդների թիվ,
2. Որոշակի ծրագրի շրջանակներում ներգրավված երիտասարդների թիվ:

**Ոլորտի և շարունակական ծրագրերի ֆինանսավորման մարտահրավեր**

Ինստիտուտի կայացման համար կարևոր գործոն է ոլորտի ֆինանսավորման հնարավորությունների կայունությունը: Երիտասարդական աշխատանքի ուղղվածությունը, բովանդակությունը, իրականացվող ծրագրերը մեծապես կախված են այն աղբյուրներից, որոնք ֆինանսավորում են այդ

աշխատանքները: Ինչպես նշում են ոլորտի ներկայացուցիչները, երիտասարդական ոլորտում հանրապետական մակարդակով պլանավորված ռազմավարական ծրագրերի կարիք կա, ու, իրենց խոսքերով, երիտասարդական կազմակերպությունները կարիք ունեն չկուսակցականացված «մաքուր պետական» ֆինանսավորման:

### **Միջինստիտուցիոնալ համագործակցության կայացման մարտահրավեր**

Երիտասարդական աշխատանքի ինստիտուտի կայացման և զարգացման համար կարևոր է երիտասարդության ոլորտի բոլոր դերակատարների ներգրավումը և նրանց միջև փոխհարաբերությունների, համագործակցության կարգավորումը: Հաշվի առնելով երիտասարդության ոլորտի միջ-սեկտորալ բնույթը՝ պետք է նաև սահմանել երիտասարդության ոլորտի դերակատարների և երիտասարդներին առնչվող ոլորտներում ներգրավված կառույցների միջև հարաբերակցությունը, որոնց թվում են կրթության, սոցիալական ապահովության, առողջապահության, պաշտպանության ոլորտները:

### **Համայնքում երիտասարդական աշխատանքի գործառնության համար անհրաժեշտ ենթակառուցվածքի առկայության և օգտագործման մարտահրավեր**

Գյուղական համայնքում կազմակերպված խմբային քննարկումների ժամանակ երիտասարդները նշել են, որ երիտասարդական աշխատանքների իրականացման ժամանակ ունենում են ռեսուրսների պակաս: Այդ խնդրի լուծման համար նրանք կարծում էին, որ համայնքում կարող է նշանակվել պատասխանատու, ով իրավասու կլինի օգտագործել գյուղի ենթակառուցվածքները, տարածք ունենա, իրեն հասանելի լինեն նյութական ու մարդկային ռեսուրսները:

### **Ոլորտի աշխատանքների ամբողջականացման մարտահրավեր**

Թեպետ Հայաստանում անընդհատ իրականացվում են երիտասարդական աշխատանքի ուղղվածությամբ տարբեր քայլեր, այնուամենայնիվ, ոլորտում ունենք երիտասարդական աշխատողների՝ միմյանց հետ փոխկապվածության, աշխատանքների փոխայանմանավորվածության բացակայություն, ինչը, փորձագետների կարծիքով, երբեմն հանգեցնում է նրան, որ միևնույն թեմայով կազմակերպվում են միաժամանակյա գործո-

ղություններ տարբեր կազմակերպությունների կողմից այն դեպքում, երբ համագործակցությունը ձեռնտու կլիներ բոլորին, և մյուս կողմից, փորձագետների կարծիքով, բացակայում է պլանավորված ռազմավարական երիտասարդական աշխատանք հանրապետությունում:

Հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս ներկայացնելու երիտասարդական աշխատանքի զարգացման ուղղությամբ մոտեցումները՝ ըստ երիտասարդական աշխատողների և քաղաքականություն մշակողների:

**Աղյուսակ 8. Երիտասարդական աշխատանքի զարգացման սկզբունքները**

<b>Ըստ երիտասարդական աշխատողների</b>	<b>Ըստ քաղաքականություն մշակողների</b>
Երիտասարդական աշխատանքի ինստիտուտի ստատուսը պետք է լինի առավել ֆորմալ	Պետք է լինի հստակ հայեցակարգ, որը կսահմանի երիտասարդական աշխատանքի գործունեությունը, հիմնական ուղղությունները, գործառույթները
Երիտասարդական աշխատանքների արդյունքում պետք է հնարավոր լինի ընդունվել աշխատանքի նախընտրած ուղղությամբ	Երիտասարդական աշխատողները պետք է ստանան մասնագիտական կրթություն և պարբերաբար վերապատրաստվեն
Թեկուզ չնչին չափով, բայց վարձատրվող աշխատանք	Պետք է հստակեցնել, թե որ ուղղությունն ենք նախընտրում՝ կենտրոնացված, թե ապակենտրոնացված:
Իրականացվող ծրագրերը պետք է հիմնականում ուղղված լինեն երիտասարդների, ոչ թե այլ խնդիրների լուծմանը:	Անհրաժեշտ է մշակել երիտասարդական աշխատանքի որակի վերահսկման, ինչպես նաև մշտադիտարկման տեղայնացված գործիքներ իրականացնել վերահսկում և մշտադիտարկում:

Ինչպես տեսնում ենք, վերոնշյալ դատողությունները չեն հակասում միմյանց, այլ հակառակը՝ փոխլրացնում են: Հետազոտությունը ցույց տվեց, որ ոլորտի ներկայացուցիչները բաց են նոր տեղեկատվության, պատրաստակամ են միմյանց հետ համագործակցության, ցանկանում են աշխատել պետության հովանու ներքո:

# ՄԱՍ IV. Երիտասարդական աշխատողի՝ ԸՆՍԱՀԱՆՄԱՆԱՆ ԿՈՆԳԵՊՏՈՒԱԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ըստ ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգի՝ Երիտասարդական աշխատողը անձ է, ով իրականացնում է երիտասարդական աշխատանք՝ նպաստելու երիտասարդների անհատական, սոցիալական և կրթական աճին, զարգացնելու նրանց ներուժը և օգնելու երիտասարդներին լիարժեք հաստատվելու հասարակության մեջ: Երիտասարդական աշխատողն իրագեկ է երիտասարդության իրական կյանքին, նրա տեղական պայմաններին, կարող է զննահատել իրավիճակը և երիտասարդ մարդկանց կարիքները, ընտրել և կիրառել աշխատանքի համապատասխան մեթոդներ, իրականացնել կատարվող աշխատանքի ազդեցության վերլուծություն: Նա աշխատում է երիտասարդների և երիտասարդական խմբերի հետ, մշակում, իրականացնում և զննահատում է երիտասարդական ծրագրեր և նախագծեր, համագործակցում է տարբեր ոլորտների շահագրգիռ անձանց, խմբերի և կազմակերպությունների հետ:

Ինստիտուտի կայացման տեսանկյունից կարևոր է ունենալ չափելի ցուցիչներ, որոնք ժամանակին թույլ կտան հասկանալ՝ որևէ իրականացված ծրագրի ընթացքն ու արդյունքը արդյոք համապատասխանո՞ւմ են նախանշվածին ու ակնկալվածին: Անդրադառնալով վերոնշյալ սահմանման մեջ ներառված ցուցիչներին ու դիտարկենք՝ արդյոք դրանք չափելի՞ են<sup>18</sup>:

*Երիտասարդական աշխատողը անձ է, ով իրականացնում է երիտասարդական աշխատանք՝*

<sup>18</sup> Սահմանման վերլուծությունը իրականացվել է կոնցեպտի ամբողջականության և կատեգորիաների առանձնացման վերլուծության որակական մոտեցմամբ:



**1. Նպաստելու երիտասարդների անհատական, սոցիալական և կրթական աճին, զարգացնելու նրանց ներուժը,**

Այսինքն՝ երիտասարդական աշխատողը պետք է ունենա համապարփակ **գիտելիքներ** անձի անհատական աճի, հասարակության մեջ սոցիալական դիրքի ու այդ դիրքը պայմանավորող հանգամանքների, երիտասարդի կրթական ներուժի, տիրապետած բազայի, ՀՀ-ում այդ ամենի ճիշտ օպտիմալացման հնարավորություններին՝ կրթական ծրագրերից տեղեկացվածություն, դիմելու ընթացակարգերին քաջատեղյակություն: Գիտելիքներ ունենալուց բացի՝ երիտասարդական աշխատողը պետք է նաև ցանկություն ունենա աջակցելու, ինչը կարելի է չափել, օրինակ, անձի արդեն կամավորության առկա փորձով կամ ցանկությամբ, ինչպես նաև պետք է կարողանա գործել, ինչն էլ կարող է դրսևորվել համապատասխան գիտելիքը տեղին օգտագործելու օրինակով: Երիտասարդներին նպաստելու համար երիտասարդական աշխատողը պետք է ունենա կոնտակտների հասանելիություն, այսինքն՝ տարբեր առցանց և ոչ առցանց աղբյուրներում գործունեության հստակ նկարագրությամբ և հասանելի կոնտակտային տվյալների բացությամբ, երիտասարդական աշխատողը չպետք է նյութական շահ ունենա անձանց օգնելուց, քանի որ այդ ժամանակ երիտասարդական աշխատանքի ինստիտուտի գործունեությունը վտանգ ունի վերածվելու բացահայտ առևտրային հարաբերությունների, ինչպես դա տեղի է ունեցել, օրինակ, կրթական ու առողջապահական ոլորտներում:

**2. և օգնելու երիտասարդներին լիարժեք հաստատվելու հասարակության մեջ:**

Երիտասարդների ընտրության սկզբունքները՝ 1) արդյոք երիտասարդական աշխատողը պե՞տք է աշխատի այն երիտասարդների հետ միայն, ովքեր իրենց գտել ու դիմել են, 2) թե՞ անհրաժեշտ է ապահովել համագործակցությունը երիտասարդական աշխատանքի և, օրինակ, սոցիալական աշխատանքի, ոստիկանության, առողջապահության, կրթության ինստիտուտների միջև՝ հայտնաբերելու, մույնականացնելու (իդենտիֆիկացնելու) աջակցության կարիք ունեցող երիտասարդներին:

Ինստիտուցիոնալացման հաջորդ կարևոր մարտահրավերը երիտասարդների կյանքի աշխարհայացքային, կենսակերպային և գործնական ասպեկտները պայմանավորող ոլորտների օպերացիոնալիզացումն է՝ նշված

ուրրտներում անհրաժեշտ կապերի հաստատման նպատակով: Ընդ որում, խոսքը գնում է միջինատիտուցիոնալ համագործակցության և տեղեկատվության փոխանակման մասին, ինչը չի կարող կոորդինացվել առանձին անհատների կողմից: Ամբողջական և լիարժեք գործող կայացած ինստիտուտը կարիք ունի տեղեկատվական հոսքերի կառավարման և բաշխման թիմի, որը կունենա հաստիքային աշխատանք, և տվյալների գաղտնիության պահպանման պայմանները ամրագրված կլինեն պայմանագրով, ինչը ևս կլինի ինստիտուտի գործառնության երաշխավորման իրավական հիմք:

**3. Երիտասարդական աշխատողը իրագեկ է երիտասարդության իրական կյանքին, նրա տեղական պայմաններին,**

Այստեղ իրական բառը կարելի է փոխարինել առավել բնութագրակաճով, օրինակ, ամբողջականով: Երբ սահմանման մեջ ընթերցվում է «իրական» կյանք, անմիջապես առաջ է գալիս անվստահություն ուրրտում ներգրավված սուբյեկտների իրագեկվածության թերի լինելու և խնդրին ամբողջապես տիրապետելու նկատմամբ: Ուստի, երբ ապահովված լինի տեղեկատվության միջինատիտուցիոնալ փոխանակման բաղադրիչը, երիտասարդական աշխատանքի ինստիտուտը ընդունակ և պարտավոր կլինի ճանաչել երիտասարդների ամբողջական կյանքը: Ինչ վերաբերում է տեղական պայմաններին, դարձյալ անհրաժեշտ է սահմանել երիտասարդների վրա ազդեցության հնարավոր աղբյուրները՝ դրանց տիպաբանությամբ՝ հանրային, միջազգային, տեղական, մեդիայի, կրթական հաստատությունների կամ «վարակի տարածման» ուղղություններով, ազդեցության տեսակներով՝ դրական, բացասական, պասիվացնող, մոտիվացնող և այլն, երիտասարդների գործունեության ուրրտների տիպաբանությամբ՝ ընտանիք, բակային մշակույթ, ուսումնական ֆորմալ և ոչ ֆորմալ հաստատություններ, ժամանց, հաղորդակցության միջոցներ՝ սկսած համացանցից, վերջացրած հասարակական տրանսպորտով և դրանում տարածվող ռադիոտեղեկատվությամբ, և այդ բոլոր խաչաձևվող հարթություններում երիտասարդների ներկայությունը:

**4. Կարող է գնահատել իրավիճակը և երիտասարդ մարդկանց կարիքները,**

Այս պարագայում երիտասարդական աշխատողը՝ անկախ մասնագիտու-

թյունից, պետք է ունենա վերլուծական մտածելակերպ, տրամաբանական կանոնների իմացություն, ինչպիսին են, օրինակ, սիլլոգիզմի կանոնները, մեծ ու փոքրի հարաբերությունների ճանաչում ու ճիշտ կիրառումը ամենօրյա խոսքում և այլն: Մյուս կողմից, եթե ի սկզբանե ուսուցանման գործընթացում երիտասարդական աշխատողին տրվել են գնահատող մեթոդաբանության գիտելիքներ, կարելի է նաև չափել դրանց առկայությունը: Այսպիսով, իրական երիտասարդական աշխատողի կերպարի վերլուծական բաղադրիչը լիովին հնարավոր է դարձնել չափելի:

### **5. ընդդեմ և կիրառել աշխատանքի համապատասխան մեթոդներ,**

Երիտասարդների կյանքի տարբեր ասպեկտների խնդիրների հայտնաբերման համար երիտասարդական աշխատողը պետք է տիրապետի հոգեբանական և սոցիոլոգիական հետազոտման մեթոդաբանությանը, ինչպես նաև ունենա դասավանդման, սոցիալական աշխատանքի և այլ մեթոդներ, քանի որ մեթոդ եզրույթը/տերմինը/ ի սկզբանե գիտական է, և այստեղ էլ անհրաժեշտ է ապահովել երիտասարդական աշխատողի կերպարի ամբողջականացման համար հետազոտական պրակտիկայում լայնորեն տարածված մեթոդներ, ինչի նպատակով համապատասխան մասնագետները կարող են հոգեբանական և սոցիոլոգիական հետազոտական պրակտիկմ եթոդների՝ երիտասարդական աշխատանքի համար նախատեսված ուղղորդող համապարփակ ձեռնարկներ ապահովել հայերեն լեզվով և ապահովել մատչելիություն հոգեբանական ու սոցիոլոգիական գիտության մեջ չմասնագիտացած անձանց համար: Ու այդ դեպքում հնարավոր մեթոդների իմացության ստուգումը նույնպես չափելի կդառնա:

Անդրադառնալով երիտասարդական աշխատողի կողմից համապատասխան մեթոդների կիրառման երևույթին՝ նախ պետք է ի սկզբանե ընդունել որպես փաստ, որ հոգեբանական ու սոցիոլոգիական մեթոդաբանությամբ ճիշտ ուսումնասիրություններ իրականացնել գուցե յուրաքանչյուր երիտասարդ ընդունակ չլինի, ու այդ դեպքում ոլորտում առկա տեղեկատվությունը և հաշորդող գործողությունները, որոնք ուղղված են երիտասարդների բարօրությանը, կարող են աղավաղվել: Այդ պատճառով կարևոր կլինի մասնագիտական խորհրդի առկայությունը, ով կստուգի անձի հետազոտական ունակությունները և կորոշի երիտասարդական աշխատանքով զբաղվող անձանց հետազոտական ներուժը և տվյալ անձի հետազոտա-

կան գործունեությամբ զբաղվելու թույլատրելիության կամ նրանից եկած տվյալների որակի արժեքի հարցը՝ ըստ սահմանված ցուցիչներին տրվող գնահատականների: Գուցե այստեղ խոսքը կարող է զնալ երիտասարդ աշխատողի տիպաբանության մասին՝ ըստ գործողությունների տեսակի, կամ իրականացված երիտասարդական աշխատանքի կշռի մասին ինստիտուտի գործունեության մեջ, ինչով էլ, օրինակ, կարող է չափելի կերպով հիմնավորվել տվյալ անձի՝ երիտասարդական աշխատանքի ինստիտուտի հնարավոր ռեսուրսների հասանելիությունը: Այսպիսով, առաջ է գալիս երիտասարդական աշխատողի որակավորման կատեգորիաներից մեկը՝ հետազոտական գիտելիքներ (ինչ գիտի), կարողությունները (արդյոք կարող է գործնականում կիրառել տեղին), հմտություններ (ունեցած գիտելիքները ինչպես է կիրառում գործնականում՝ պրոտեցիալ ծախսված ռեսուրսների և ակնկալվող արդյունքի հարաբերակցության տեսանկյունից): Այսպիսով, ստացանք որակավորման մեկ լիովին չափելի ցուցիչ:

#### ***6. իրականացնել կարարվող աշխատանքի ազդեցության վերլուծություն,***

Այստեղ արդեն խոսքը գնում է ոչ թե անձի հոգեբանական առանձնահատկությունների կամ սոցիալական դիրքի ուսումնասիրության մասին, այլ արդեն իսկ որևէ խնդրին/առաջադրանքին ուղղված իրականացվող ծրագրի ընթացիկ մոնիթորինգի և իրականացվելուց հետո համապատասխանաբար արդյունքի գնահատման մասին: Իրականում գնահատման մեթոդաբանությունները ավելին են, որոնք պետք է ներգրավված լինեն երիտասարդական աշխատանքի ինստիտուտին դիմած և դուրս եկող ցանկացած հետազոտական առաջարկի նկատմամբ: Դրանք են՝ ծրագրի վերլուծությունը (design assessment), կարիքների գնահատում (need assessment), ծրագրի ընթացքի գնահատում (process assessment), ընթացիկ մոնիթորինգներ, արդյունքի գնահատում (project effectiveness and efficiency assessment), ազդեցության գնահատում (impact assessment), ինչից հետո միայն կարելի է գնահատել (evaluate) ամբողջական ծրագիրը: Ընդ որում, յուրաքանչյուր քայլի չափելի ինդիկատորների սահմանման և երիտասարդական աշխատանքի իրականացման տեսանկյունից, ըստ կարևորության և ծախս-արդյունք համապատասխանության, յուրաքանչյուր ցուցիչին մաթեմատիկական կշիռ տալու դեպքում հնարավոր է նույնիսկ չափելի դարձնել ընդ-

հանուր երիտասարդական աշխատանքի ծրագրերի արդյունավետությունը և ըստ այդմ անընդհատ իրականացնել ինստիտուտի հետագա քայլերի ռազմավարության լիովին փաստարկված ծրագրում:

**7. Նա աշխատում է երիտասարդների և երիտասարդական խմբերի հետ,**

Վերոնշյալ կետերը, եթե բնութագրում էին երիտասարդական աշխատողի կերպարի բնութագրիչները և գործունեության մեթոդական հիմքերը, ապա այստեղ անդրադարձ է կատարվում արդեն որակավորված երիտասարդական աշխատողի ամենօրյա աշխատանքին ու դարձյալ անդրադարձ պետք է կատարվի սահմանման վերլուծության երկրորդ կետին: Անհրաժեշտ է սահմանել երիտասարդների համար «լավագույն շահ» ասվածը, որը որպես երիտասարդական աշխատողի գործողությունների համար հաշվարկի սկզբնակետ, կվերցնի երիտասարդի ներկա արժեքային կողմնորոշիչները, կյանքի կազմակերպման առաջնահերթ պայմանները և այս կատեգորիաների ընձեռած պայմաններում երիտասարդի համար որպես ելք՝ լավագույն լուծումը, որին ինքը՝ երիտասարդը, կլինի համաձայն և ցանկություն կունենա գիտակից կերպով մասնակցելու նախաձեռնությամբ: Այստեղ երիտասարդական աշխատողին լիովին արդարացիորեն կարելի է վերագրել բժշկական «մի վնասիր»-ը:

**8. մշակում, իրականացնում և գնահատում է երիտասարդական ծրագրեր և նախագծեր,**

Այս կետը գրեթե լիովին ներկայացված է սահմանման վերլուծության 3-6-րդ կետերում: Որպես հավելում կարող ենք նշել, որ ինստիտուտի ներսում կարիք կլինի ծրագրերի գնահատման համար արտաքին գնահատող թիմի կամ առանձին անձանց կողմից գնահատում, ինչը կնպաստի իրականացված աշխատանքների հաշվետվողականությանը, թափանցիկությանը և համընդհանուր աշխատանքային և թեմատիկ արժեքների հաստատմանն ու ամրագրմանը:

**9. համագործակցում է փարբեր ոլորտների շահագրգիռ անձանց, խմբերի և կազմակերպությունների հետ:**

Ինչպես նշվեց երկրորդ կետում, երիտասարդական աշխատանքի ինստիտուտի կայացման գրավականը մենք տեսնում ենք միջինստիտուցիոնալ համագործակցության հաստատմանը սերտ կապված: Այնուամենայնիվ, պետք է բարձր գնահատվեն երիտասարդական աշխատողի գործնական

և անճանական կապերի հաստատման ունակությունը և ցանկությունը, ինչպես նաև կապող օղակ հանդիսանալու ձգտումը:

Մահմանման բովանդակային վերլուծությունից հետո նկատում ենք, որ այն լիովին չի ներկայացնում երիտասարդական աշխատողի կերպարի բոլոր ատրիբուտները, ամբողջական արդյունավետ կերպով գործառնող ինստիտուտում երիտասարդական աշխատողի դերն ու հնարավորությունները, երիտասարդական աշխատողից ակնկալվող աշխատանքները ու արդյունքները: Մասնավորապես անդրադարձ չի կատարվում երևույթի իմացաբանական ասպեկտներին, ինչպիսին են, օրինակ, մեր ազգի մշակութային առանձնահատկությունների պայմաններում երիտասարդական աշխատանքի ինստիտուտի ու դրա արժեքների տեղայնացման կարևորությունը, երիտասարդական աշխատողի հոգեբանական կերպարին, միջինստիտուցիոնալ համագործակցությանը և այլն:

## Եզրակացություններ և առաջարկություններ

**Եզրակացություն 1:** Այն դեպքում, երբ հետազոտության շրջանակներում կազմակերպված խմբային հարցազրույցներին մասնակցություն ունեցել են բնակավայրում երիտասարդական աշխատանքների կազմակերպիչները, ակտիվ մասնակիցները, շատ դեպքերում մասնակիցները առաջին անգամ էին լսում «երիտասարդական աշխատանք», «երիտասարդական աշխատող» հասկացությունները:

**Առաջարկություն 1:** Ընդհանուր առմամբ կարիք կա հենց ոլորտի ներկայացուցիչների շրջանում տարածել երիտասարդական աշխատանքի էության, գործառնության մասին տեղեկատվություն:

**Եզրակացություն 2:** Լինելով իրենց համայնքում երիտասարդական աշխատանք իրականացնողներ՝ որոշ դեպքերում երիտասարդները դժվարանում էին խոսել իրենց՝ որպես երիտասարդական աշխատողի կարիքների մասին, քանի որ ընդհանուր առմամբ չէին պատկերացնում երիտասարդական աշխատանքի էությունը և երիտասարդական աշխատողի գործունեությունը:

**Առաջարկություն 2:** Անհրաժեշտ է տարածել երիտասարդական աշխատողի կերպարի բնութագիրը և շեշտադրել, թե որ դեպքերում անձը կարող է համարվել երիտասարդական աշխատող, որոնք են նրա հնարավորությունները և աշխատանքի ուղղվածությունը:

**Եզրակացություն 3:** Որպես իրենց գործունեության իրականացման խոչընդոտ՝ համայնքում երիտասարդական աշխատանքի իրականացման մասնակիցները նշում էին թույլ կապը պետական մարմինների հետ, ինչի պատճառով իրենք չեն կարողանում օգտվել պետական ռեսուրսներից, օրինակ, գյուղական համայնքում որևէ սենյակի կամ տեխնիկայի շահագործումը:

**Առաջարկություն 3:** Նման խնդրի լուծման համար երիտասարդները տեսնում են լուծում համայնքում պատասխանատու անձի նշանակումը, ով իրավասու կլինի ի նպաստ երիտասարդական աշխատանքների կատարման՝ շահագործել պետական ռեսուրսները:

**Եզրակացություն 4:** Ոլորտի ներկայացուցիչները միաձայն նշում են, որ ՀԿ դաշտը կարգավորման, փոխկապման, ներքին և արտաքին համագործակցության հաստատման, պետական շահերին ուղղված համակարգված աշխատանքի կարիք ունի, ինչը առանձին ՀԿ-ներին թույլ կտա իրենց ռազմավարական քաղաքականությունը իրականացնել՝ անկախ ստացած կարճաժամկետ դրամաշնորհային ծրագրի ավարտից ու չկրկնվելուց:

**Առաջարկություն 4:** Որպես խնդրի լուծում՝ ՀԿ-ները առաջարկում են պետության կողմից՝ ՀԿ-ներին ամենամյա դրամագլխի տրամադրում, ինչը կապահովի ՀԿ-ի նվազագույն ծախսերը և կրնձեռի սեփական նախաձեռնությամբ շարունակական աշխատանքների իրականացման հնարավորություն:

**Եզրակացություն 5:** Ոլորտի ներկայացուցիչները կարծիք են հայտնել իրենց՝ երիտասարդների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության պակասի մասին:

**Առաջարկություն 5:** Ոլորտի ներկայացուցիչները շեշտադրում են ինստիտուտի առողջ գործառնության համար միջինստիտուցիոնալ/ միջսեկտորալ կապի ապահովման կարևորությունը պետական մակարդակով:

**Եզրակացություն 6:** Երիտասարդական աշխատանքը այս պահին ունի նախնական իրավական հիմք ՀՀ-ում որպես ինստիտուտ հիմնվելու համար: Անդրադառնալով երիտասարդական աշխատողի սահմանմանը՝ հարկ է նշել, որ ոլորտի ներկայացուցիչների կողմից հնչեցված սահմանումները ամբողջական չեն:

**Առաջարկություն 6:** Անհրաժեշտ է վերամշակել ներկայումս տարածում գտած երիտասարդական աշխատողի պաշտոնական սահմանումը, քանի որ այն ոչ ամբողջությամբ է արտահայտում երիտասարդական աշխատողի կերպարը, նպատակները, արժեքներն ու գործունեության տեսակները, չի մատնանշում երկրում երիտասարդական ինստիտուտի գոյության հրատապությունն ու անհրաժեշտությունը: Այսպիսով, անհրաժեշտ է մշակել երիտասարդական աշխատանքի ինստիտուտի ամբողջական հայեցակարգ՝ տեսլականով, խնդիրներով, նշանակությամբ, հիմնավորվածությամբ և ապագայի հավաստիքով:

**Եզրակացություն 7:** Հետազոտության մասնակիցները ավելի շատ առաջ են տանում երիտասարդական աշխատողի՝ որպես վճարվող աշխատողի կարգավիճակը:

**Առաջարկություն 7:** Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ տարբեր երկրներում երիտասարդական աշխատանքներում մեծ դերակատարում ունի կամավորությունը, Հայաստանում ինստիտուտի կայացումից հետո հատկանշական կլինի երիտասարդական աշխատողների երկու տեսակի առկայությունը՝ վճարվող պրոֆեսիոնալներ և կամավոր երիտասարդական աշխատողներ:

**Եզրակացություն 8:** Երիտասարդական աշխատանքը՝ որպես գործունեության հիմնական տեսակ, ոլորտի ներկայացուցիչների կողմից վերագրվում է երիտասարդական ուղղվածությամբ դրամաշնորհային ծրագրեր իրականացնող երիտասարդական կազմակերպություններին, և մնան գործունեություն որդեգրած կազմակերպություններն էլ հենց հաճախ իրականացնում են որոշակի ֆինանսավորում չպահանջող քայլեր՝ ուղղված երիտասարդների զարգացմանը:

